ԱՆԱՐՁԱԳԱՆՔ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ.

ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2022-2024 թվականների զեկույց

Զեկույցի նպատակն է պետական համակարգին և լայն հանրությանը ծանոթացնել կնասպանության երևույթին, պատճառներին, ներկայացնել կնասպանության և ընտանեկան բռնության միջև առկա կապը, ինչպես նաև կնասպանության գործերով դատական ակտերի ուսումնասիրությամբ վերհանել օրենսդրական և իրավակիրառ համակարգում առկա համակարգային բացերը:

Զեկույցը պատրաստվել է «Կանանց դեմ բռնության վերացման ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամի» ֆինանսավորմամբ, սակայն արտահայտված տեսակետները և ներառված բովանդակությունը չեն ենթադրում ՄԱԿ-ի կողմից պաշտոնական հաստատում կամ ընդունում:

Զեկույցից որևէ հատված օգտագործելու և մեջբերելու պարագայում համապատասխան հղում կատարելը պարտադիր է:

Զեկույցը նվիրվում է պետական անգործության պայմաններում կնասպանության հետևանքով սպանված բոլոր կանանց

Ստելլա Չանդիրյան

Գենդերային հարցերով իրավաբան-հետազոտող, միջազգային և եվրոպական համեմատական իրավունքի մասնագետ

Լեզվական խմբագիր՝ Ազնիվ Նասլյան

Շապիկը և նկարազարդումը՝ «Զարտպրինտ»-ի

! ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ նյութը պարունակում է բռնության տեսարաններ և սպանության նկարագրություններ

ՀՏԴ 343.61:316.346.2(042.3)
ԳՄԴ 67.408.111.1+60.542.21
Չ 211

Չանդիրյան Ս.
Չ 211 Անարձագանք բռնություն. կնասպանությունը Հայաստանում / Ս. Չանդիրյան.-
Եր.: Զարտպրինտ, 2025.- 67 էջ:

ՀՏԴ 343.61:316.346.2(042.3)
ԳՄԴ 67.408.111.1+60.542.21

ISBN 978-9939-9367-1-0
© Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

«Կնասպանություն» եզրույթն ու դրա կիրառման շրջանակը 13

Կնասպանության դեպքերի ուսումնասիրության շրջանակը 5

Քրեական գործերի դատաքննությունն ավարտված և դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով կնասպանության դեպքեր 18

Դեռևս չավարտված և/կամ քրեական վարույթը կարճված գործերով կնասպանության դեպքեր 34

Անմեղսունակության վիճակում կատարված կնասպանության դեպքեր 40

Չնույնականացված կնասպանության դեպքեր DataLex դատական տեղեկատվական համակարգում 46

Ամփոփում 51

Քաղաքականության մշակման առաջարկներ 58

Հավելված 1. Քանակական տվյալներ 60

Հավելված 2. Հիմնական հասկացություններ 62

Գրականության ցանկ 66

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կանանց նկատմամբ բռնությունը մարդու իրավունքների և հանրային առողջապահության ոլորտների կիզակետում հայտնված խնդիր է: Դրա ծայրահեղ դրսևորումներից է կնասպանությունը, որի տարածվածությունն ամբողջ աշխարհում տագնապալի թվերի է հասնում:

Կնասպանությունը՝ որպես կանանց նկատմամբ խտրականության դրսևորում, դեռևս ամբողջությամբ ուսումնասիրված չէ, ինչը պայմանավորված է նախևառաջ հանցագործության բնույթով, վստահելի և համապարփակ վիճակագրական տվյալների բացակայությամբ, ինչպես նաև տարբեր պետությունների կողմից կանանց սպանությունների՝ որպես կնասպանության որակման միասնական մոտեցման բացակայությամբ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ կանանց սպանությունների 38%-ը կատարվում է ներկա կամ նախկին զուգընկերոջ կողմից[1]: Յուրաքանչյուր 10 րոպեն մեկ 1 կին է սպանվում զուգընկերոջ կամ ընտանիքի այլ անդամի կողմից[2]: Միայն 2023 թվականին շուրջ 85·000[3] կնոջ են սպանել, որոնցից 51·100-ին սպանել են զուգընկերները կամ ընտանիքի այլ անդամները[4]: Այս ցուցանիշերը, սակայն, չեն արտահայտում կնասպանության դեպքերի ամբողջական ու իրական պատկերը[5]:

Կնասպանությունն այն հանցագործությունն է, որը հայրիշխանական համակարգն ապաքաղաքականացնում ու մեկնաբանում է որպես «խենթ անձանց կողմից» կատարվող հանցագործություն, ինչի հետևանքով էլ բազմաթիվ հանցագործներ չեն ստանում այդ հանցագործության համար համաչափ պատիժ: Արդարացնելով այս սպանությունները՝ համակարգը հետապնդում է ինքնապահպանման միտում:

Կնասպանության արմատական պատճառների վերացմանը հասնելու համար կարևոր է հաշվի առնել, որ այն քաղաքական հանցագործություն է, որը պահանջում է համընդհանուր ճանաչում և համակարգային արձագանք: Շատ կարևոր է անդրադառնալ դրա իրական արմատներին այն համոզմամբ, որ կնասպանությունը կնոջ կյանքի և մարմնի վրա ուժի և իշխանության դրսևորման ծայրահեղ արտահայտությունն է:

[1]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.who.int/news-room/fact-sheets/detail/violence-against-women?

[2]Հասանել է հետևյալ հղմամբ՝ https://www.unodc.org/unodc/en/press/releases/2024/November/one-woman-is-killed-every-10-minutes-by-their-intimate-partners-or-other-family-members.html

[3]Ավելի մանրամասն հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.unodc.org/unodc/frontpage/2024/November/explainer_-what-are-femicide-reviews.html

[4]Ավելի մանրամասն հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.unodc.org/documents/data-and-analysis/briefs/Femicide_Brief_2024.pdf

[5]Ավելի մանրամասն հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.unodc.org/documents/data-and-analysis/gsh/Booklet_5.pdf?

ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Կնասպանության դեպքերն ուսումնասիրելիս հիմնականում առանձնացնում են հետևյալ մոտեցումները[6]՝

- **ֆեմինիստական մոտեցում,** որն ուսումնասիրում է կանանց սպանության դեպքերը՝ միևնույն ժամանակ հակադրվելով հայրիշխանական կեղեքմանը,
- **սոցիոլոգիական մոտեցում,** որի կիզակետում կանանց սպանությունների հատուկ առանձնահատկությունների ուսումնասիրությունն է, որոնք կնասպանությունը դարձնում են առանձին երևույթ,
- **քրեաբանական մոտեցում,** որն անդրադառնում է կնասպանությանը՝ որպես հանցագործության մի տարատեսակի,
- **մարդու իրավունքների մոտեցումը** դիտարկում է կնասպանության ավելի լայն շրջանակը՝ համարելով այն կանանց նկատմամբ բռնության առավել ծայրահեղ դրսևորում,
- **ապագաղութային մոտեցումն** ուսումնասիրում է կնասպանության դեպքերը գաղութային տիրապետության համատեքստում՝ ներառյալ «պատվի համար» սպանությունները:

Այս **զեկույցի շրջանակում կնասպանության դեպքերը,** դրանց պատճառահետևանքային կապը գենդերային բռնության համատեքստում **կուսումնասիրվեն ֆեմինիստական և մարդու իրավունքների մոտեցումներով:**

Ֆեմինիստական մոտեցման հիմքում հայրիշխանական համակարգում կիրառվող իշխանության վերլուծությունն է: Հայրիշխանության հիմնարար սկզբունքը ուժը և իշխանությունն են, ընդ որում՝ կանանց և տղամարդկանց միջև այդ ուժերը բաշխված են անհավասարաչափ, որտեղ տղամարդիկ ունեն իշխանություն և բռնանում են կանանց նկատմամբ սեփական վերահսկողությունը պահպանելու համար:

Եվ թեև կնասպանության արմատական պատճառները վաղուց արդեն բացահայտված են և ներկայացված տարբեր հետազոտությունների շրջանակներում, այնուամենայնիվ, հանցագործության կատարման, կնասպանության ճանաչման, արձագանքման, մեկնաբանման և հանցագործությունը կատարած անձանց պատժի ձևերը յուրաքանչյուր

[6]Ավելի մանրամասն հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://coalitionagainstviolence.am/wp-content/uploads/2024/10/femicide2018.pdf

պետությունում ունեն որոշակի տարբերություններ: Կնասպանության դրսևորումները Հայաստանում քիչ են ուսումնասիրված: Նախադեպային ուսումնասիրություն[7] անցկացրել է միայն «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան» 2016 թվականին, այն իր բնույթով առավելապես հետախուզական էր և նպատակ ուներ ներկայացնելու 2010-2015 թվականներին սպանված կանանց պատմությունները:

2018 թվականին երկրորդ զեկույցն[8] անդրադառնում էր 2016-2017 թվականների կնասպանության դեպքերին, իսկ 2022 թվականի երրորդ զեկույցը[9]՝ 2018-2021 թվականների ընթացքում արձանագրված կնասպանության դեպքերին: Երկրորդ և երրորդ զեկույցները մասնավորապես ներկայացնում էին կնասպանության երևույթի համակարգային և խոր արմատացած պատճառները՝ քննարկելով դրանք նաև կնասպանության գործերի դատավարությունների համատեքստում:

Այս զեկույցը չորրորդն է, որը, շարունակելով նախորդ զեկույցների տրամաբանությունը, անդրադառնում է կնասպանության հիմնախնդրին Հայաստանում՝ ներկայացնելով 2022-2024 թվականների ընթացքում արձանագրված և հասանելի կնասպանության դեպքերը:

Կնասպանության արձանագրված և հասանելի դեպքեր

Զեկույցի շրջանակում կնասպանության դեպքերը ներկայացվում են՝ հիմք ընդունելով Հայաստանում գրանցված և DataLex դատական տեղեկատվական համակարգում տեղադրված և հասանելի դատական գործերը:

Այս ցուցանիշերը չեն արտահայտում կնասպանության իրական տվյալները, և դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից են՝

1. **Հայաստանում կնասպանության դեպքերի վերաբերյալ վիճակագրություն չի վարվում, ուստի առկա չեն կնասպանության դեպքերի վերաբերյալ միասնական, ճշգրիտ վիճակագրական տվյալներ:**

[7]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://coalitionagainstviolence.am/wp-content/uploads/2024/11/Femicide_Report_ARM.pdf

[8]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://coalitionagainstviolence.am/wp-content/uploads/2024/10/femicide2018.pdf

[9]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://coalitionagainstviolence.am/wp-content/uploads/2024/10/%D5%A1%D5%B6%D5%B-F%D5%A5%D5%BD%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%A2%D5%BC%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6_%D5%AF%D5%B6%D5%A1%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4.pdf

Առհասարակ, գենդերային բռնությունը լատենտային բնույթի բռնության տեսակ է, ինչը նշանակում է, որ բռնության նշված տեսակի վերաբերյալ տեղեկություններն ու վիճակագրական տվյալներն ամբողջությամբ չեն արտացոլում բռնության իրական պատկերը, բայց այնպիսի պայմաններում, երբ պետությունը կնասպանության դեպքերով առհասարակ չի հավաքում վիճակագրություն, դրանց վերաբերյալ տեղեկություն գտնելը դառնում է խիստ դժվարին: Այս իմաստով կարևոր է նկատել, որ դեռևս 2016 թվականին ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեն Հայաստանի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում անդրադարձել էր վիճակագրական տվյալների ոչ ամբողջական և իրական տվյալների բացակայության խնդրին[10]:

Առանձնահատուկ կարևոր է ընդգծել նաև այն հանգամանքը, որ պրակտիկայում հանդիպում են իրավիճակներ, երբ կանայք ծանր կամ երկարատև բռնությունից հետո ինքնասպանություն են գործում: Այսպիսի գործերը ևս հաճախ դուրս են մնում վիճակագրությունից և չեն որակվում որպես կնասպանություն, իսկ երբեմն էլ առհասարակ մնում են չբացահայտված:

2. DataLex դատական տեղեկատվական համակարգում հասանելի չեն տեղադրված բոլոր դատական գործերը:

Զեկույցի կազմման ընթացքում ուսումնասիրվել են բացառապես այն քրեական գործերը, որոնք հասանելի են DataLex դատական տեղեկատվական համակարգում և այն շրջանակներում ու ծավալներով, որոնք ներկայացված են տեղեկատվական այդ հարթակում: Նշվածի կապակցությամբ հարկ է նկատել, որ **DataLex դատական տեղեկատվական համակարգի հասանելի դատական գործերի շարքում** չեն ներառվել **2024 թվականի ընթացքում կատարված կնասպանության դեպքերը**:

2022 և 2023 թվականների ընթացքում արձանագրված կնասպանության այն դեպքերը, որոնց վերաբերյալ համապատասխան տեղեկություններ առկա չեն այդ համակարգում, կամ այդ տեղեկության հասանելիությունը սահմանափակ է, նույնպես չեն ներառվել զեկույցում:

Միաժամանակ, DataLex դատական տեղեկատվական համակարգի քրեական գործերի ուսումնասիրությամբ հայտնաբերվել են քրեական գործեր, որոնք ևս չեն ներառվել զեկույցում կատարված հանցագործությամբ տուժող անձի անվան ոչ ամբողջական լինելու, նրա գենդերի/սեռի մասին նշումների բացակայության հետևանքով:

[10]ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N16/402/29/PDF/N1640229.pdf?OpenElement

3. Հնարավոր չի եղել ուսումնասիրել մինչդատական փուլում գտնվող կնասպանության վերաբերյալ քրեական գործերը, ինչպես նաև պարզել դրանց վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալները:

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան» ՀՀ քննչական կոմիտեին և ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված գրություններին ի պատասխան տեղեկացվել է, որ **ՀՀ քննչական կոմիտեում չի վարվում վիճակագրություն[11] կնասպանության դեպքերով,** ինչպես նաև ՀՀ քրեական նոր օրենսգրքի 155-156-րդ հոդվածների, 161-166-րդ հոդվածների, 174-րդ հոդվածի 4-րդ մասի, 175-րդ հոդվածի 2-րդ մասի, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2)-րդ կետի, 185-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 186-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 188-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 189-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 191-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 192-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 193-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 198-րդ հոդվածի 3-րդ մասի 3)-րդ կետի, 199-րդ հոդվածի 3-րդ մասի 3)-րդ կետի, 200-րդ հոդվածի 3-րդ մասի 3)-րդ կետի, 402-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 450-րդ հոդվածի 2-րդ մասի 8)-րդ կետի հատկանիշեր պարունակող հանցագործությունների վերաբերյալ:

Ինչ վերաբերում է ՀՀ գլխավոր դատախազությանը, ապա պատասխան գրությունից[12] պարզ է դառնում, որ դատախազությունը վարում է վիճակագրություն, թե համապատասխան հոդվածներով հարուցված քրեական գործերից քանիսն են մեղադրական եզրակացությամբ հանձնվել դատարան, սակայն չի վարում վիճակագրություն, թե այդ քրեական գործերից քանիսի պարագայում են կանայք և/կամ անչափահաս աղջիկները դիտարկվել որպես տուժող, ինչպես նաև, թե այդ քրեական գործերից քանիսի պարագայում են տրանս կանայք դիտարկվել որպես տուժող:

Իրավիճակը փոքր-ինչ տարբերվում է ոստիկանությունում[13]: Համաձայն ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում կին տուժողների նկատմամբ գրանցված հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների՝ **2022 թվականից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը գրանցվել է կնասպանության 39 դեպք** (2022 թվականին՝ 19, 2023 թվականին՝ 9, 2024 թվականին՝ 11): Ոստիկանությունում ևս վիճակագրություն չի վարվում քրեական գործերով տրանս կանանց որպես տուժող դիտարկելու վերաբերյալ:

[11]Համաձայն ՀՀ քննչական կոմիտեի Հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության 18.06.2025 թվականի № 12/12/210646-2025 գրության:
[12]Համաձայն ՀՀ գլխավոր դատախազության 18.06.2025 թվականի № 20.5/20.5/13363-2025 գրության:
[13]Համաձայն ՀՀ ՆԳՆ Հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության 01.07.2025 թվականի № 10/295 գրության:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունվեց ՀՀ գործող քրեական օրենսգիրքը[14], որն ուժի մեջ մտավ 2022 թվականի հուլիսի 1-ից՝ բացառությամբ 551-րդ հոդվածի 2-5-րդ մասերով նախատեսված դեպքերի: Մինչ 2022 թվականի հուլիսի 1-ը կատարված հանցագործությունների համար կիրառելի էր 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական հին օրենսգիրքը[15]:

DataLex դատական տեղեկատվական համակարգում քրեական գործերի որոնման հարցում արդյունավետ է «Խելացի որոնում» գործիքի[16] կիրառումը, որը հնարավորություն է տալիս ընտրելու ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածն ու ծանոթանալ այն քրեական գործերին, որոնք հարուցված են եղել այդ հոդվածներով և տեղադրված են տեղեկատվական համակարգում:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի ընդունումից հետո, սակայն, այդ գործիքակազմը չի թարմացվել, և դա պահպանվել է զեկույցի կազմման ամբողջ ժամանակահատվածում՝ 2025 թվականի հունիսի 9-ից մինչև հուլիսի 11-ը: Կարևոր է արձանագրել նաև, որ թեպետ տեխնիկապես «Խելացի որոնում» գործիքի միջոցով կարելի է մուտքագրել հոդվածի համարն ու ստանալ այն քրեական գործերը, որոնք հարուցված են եղել ՀՀ քրեական նոր օրենսգրքով, սակայն դա վերաբերելի չէ բոլոր հոդվածներին: Մասնավորապես՝ քրեական հին օրենսգրքով սպանության հանցակազմն ամրագրված էր 104-րդ հոդվածի, իսկ քրեական նոր օրենսգրքով՝ 155-րդ հոդվածի ներքո: ՀՀ քրեական հին օրենսգրքի 155-րդ հոդվածով ամրագրված էր «Գործադուլի մասնակցելուն կամ գործադուլի մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելը» վերտառությամբ հոդվածը: Քանի որ «Խելացի որոնում» գործիքը թարմացված չէ, մուտքագրելով 155՝ համակարգն ինքնաշխատ տարբերակով պատկերում է բոլոր դատական գործերը, այդ թվում՝ նրանք, որոնք հարուցված են եղել «Գործադուլի մասնակցելուն կամ գործադուլի մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելը» հանցակազմի հիմքերով՝ ստեղծելով իրական խառնաշփոթ: Իրավիճակն ավելի է բարդանում, երբ անհրաժեշտություն է առաջանում փնտրելու այնպիսի հոդված, որն առկա է քրեական նոր օրենսգրքում, սակայն այդպիսի հոդված[17] կամ հոդվածի մաս/կետ, առկա չէ քրեական հին օրենսգրքում, ինչպես, օրինակ՝ 198-րդ հոդվածի 3-րդ մասի 3)-րդ կետ կամ 199-րդ հոդվածի 3-րդ մասի 3)-րդ կետ և այլն:

[14]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.arlis.am/hy/acts/208879/latest

[15]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.arlis.am/hy/acts/69646

[16]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://datalex.am/?app=AppSmartSearch

[17]ՀՀ քրեական հին օրենսգիրքն ուներ 398, իսկ նորը՝ 552 հոդվածներ:

Արդյունքում՝ DataLex դատական տեղեկատվական համակարգում ուսումնասիրվել են ՀՀ քրեական հին օրենսգրքի 104-րդ, 105-րդ, 109-րդ, 110-րդ, 111-րդ հոդվածներով, ինչպես նաև 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14)-րդ կետով, 131-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետով, 133-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետով, 138-րդ հոդվածի 2-րդ մասի 4)-րդ կետով և 139-րդ հոդվածի 2-րդ մասի 4)-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշեր պարունակող քրեական գործերը և ՀՀ քրեական նոր օրենսգրքի 155-156-րդ հոդվածների, 161-166-րդ հոդվածների, 174-րդ հոդվածի 4-րդ մասի, 175-րդ հոդվածի 2-րդ մասի, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2)-րդ կետի, 185-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 186-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 188-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 189-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 191-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 192-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 193-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 198-րդ հոդվածի 3-րդ մասի 3)-րդ կետի, 199-րդ հոդվածի 3-րդ մասի 3)-րդ կետի, 200-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 402-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 450-րդ հոդվածի 2-րդ մասի 8)-րդ կետի հատկանիշեր պարունակող քրեական գործերը:

Կիրառելով «Խելացի որոնում» գործիքը, ինչպես նաև դատական գործերի որոնմամբ «Դատավճռի բովանդակություն» աղյուսակը՝ ուսումնասիրվել են 2022-2024 թվականների ընթացքում քննված ընդհանուր 357 քրեական գործեր, որոնցից՝

→ **ՀՀ քրեական հին օրենսգրքով քննված 99 քրեական գործեր, որոնցից՝**

- 48 քրեական գործեր՝ 104-րդ հոդվածով,
- 30 քրեական գործը՝ 105-րդ հոդվածով,
- 4 քրեական գործը՝ 109-րդ հոդվածով,
- 12 քրեական գործը՝ 110-րդ հոդվածով,
- 5 քրեական գործը՝ 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14)-րդ կետով:

99 քրեական գործերից 10-ի տեղեկությունը սահմանափակված է եղել DataLex դատական տեղեկատվական համակարգում:

2022-2024 թվականների ընթացքում քննված գործերում չեն հայտնաբերվել ՀՀ քրեական հին օրենսգրքի 111-րդ հոդվածով, 131-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետով, 133-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետով, 138-րդ հոդվածի 2-րդ մասի 4)-րդ կետով և 139-րդ հոդվածի 2-րդ մասի 4)-րդ կետով հարուցված քրեական գործեր.

→ **ՀՀ գործող քրեական օրենսգրքով քննված 258 քրեական գործեր, որոնցից՝**

- 48 քրեական գործեր՝ 155-րդ հոդվածով,
- 5 քրեական գործեր՝ 162-րդ հոդվածով,
- 7 քրեական գործեր՝ 165-րդ հոդվածով,
- 189 քրեական գործեր՝ 166-րդ հոդվածով,
- 8 քրեական գործեր՝ 175-րդ հոդվածի 2-րդ մասով,
- 1 քրեական գործ՝ 176-րդ հոդվածի 2-րդ մաս-ի 2)-րդ կետով:

258 քրեական գործերից 18-ի տեղեկությունը սահմանափակված է եղել DataLex դատական տեղեկատվական համակարգում:

2022-2024 թվականների ընթացքում քննված գործերում չեն հայտնաբերվել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 156-րդ, 161-րդ, 163-164-րդ հոդվածներով հարուցված քրեական գործեր, ինչպես նաև հնարավոր չի եղել գտնել 174-րդ հոդվածի 4-րդ մասի, 185-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 186-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 188-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 189-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 191-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 192-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 193-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 198-րդ հոդվածի 3-րդ մասի 3)-րդ կետի, 199-րդ հոդվածի 3-րդ մասի 3)-րդ կետի, 200-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 402-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի, 450-րդ հոդվածի 2-րդ մասի 8)-րդ կետի հատկանիշեր պարունակող քրեական գործերը:

Արդյունքում՝ ուսումնասիրված **357 քրեական գործերից առանձնացվել են 11 կնասպանության դեպքեր, որոնցից 10-ը կատարվել են 2022-2023 թվականների ընթացքում, իսկ 1-ը՝ 2021 թվականին, սակայն դրա վերաբերյալ դատական գործը հարուցվել է 2022 թվականին:**

Կնասպանության դեպքերի ներկայացման մեթոդաբանությունը

Ուսումնասիրված քրեական գործերից զատ զեկույցում ներառվել են **DataLex դատական տեղեկատվական համակարգում չնույնականացված կնասպանության 11 դեպքեր**, որոնց մասին տեղեկություն է ստացվել ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ ոստիկանության և զանգվածային լրատվամիջոցների հրապարակումներից:

Արդյունքում՝ զեկույցում ներառվել են կնասպանության 22 դեպքեր, որոնք կատարվել են 2022-2024 թվականների ընթացքում:

Կնասպանության դեպքերը ներկայացվում են 4 ենթավերնագրերի ներքո՝

1. **Քրեական գործերի դատաքննությունն ավարտված և դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով կնասպանության դեպքեր.**
2. **Դեռևս չավարտված և/կամ քրեական վարույթը կարճված գործերով կնասպանության դեպքեր.**
3. **Անմեղսունակության վիճակում կատարված կնասպանության դեպքեր.**
4. **Չնույնականացված կնասպանության դեպքեր՝ DataLex դատական տեղեկատվական համակարգում:**

«ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹՆ ՈՒ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ[18]

Կնասպանությունը համեմատաբար նոր եզրույթ է, որը բնութագրում է կնատյացության հիմքով կանանց սպանության դեպքերը, սակայն երևույթը, որն այն բնութագրում է, այնքան հին է, որքան ինքնին հայրիշխանությունը[19]:

Անդրադարձ «կնասպանություն» եզրույթին տեսական մակարդակում

Տեսական մակարդակում «կնասպանություն» եզրույթը սկսեց շրջանառվել 1970-ականներին՝ ընդգծելով կանանց սպանությունների գենդերային հիմքը, որոնք մինչ այդ բնութագրվում էին գենդերային տեսանկյունից ավելի չեզոք՝ «մարդասպանություն» (անգլերեն՝ homicide) եզրույթով: Նման եզրույթի շրջանառությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ «մարդասպանության» սահմանումը չէր արտահայտում խտրական, ճնշող, անհավասար և համակարգային բռնությունը կանանց նկատմամբ:

Դայանա Ռասելը և Ջեյն Կապուտին 1990 թվականին սահմանեցին եզրույթը որպես «...տղամարդկանց կողմից կանանց սպանություն, որի շարժառիթն են ատելությունը, արհամարհանքը, հաճույքը կամ կնոջ նկատմամբ սեփականատիրական նկրտումները»[20]:

Հետագայում Դայանա Ռասելն ու Ջիլ Ռեդֆորդն առաջարկեցին մեկ այլ սահմանում, մասնավորապես՝ «...ատելության հիմքով կնոջ սպանությունը տղամարդու կողմից»[21], իսկ արդեն 2001 թվականին Դայանա Ռասելն ու Ռոբերտա Հարմեսը սահմանումն ընդլայնեցին իբրև «կանանց սպանություն տղամարդկանց կողմից նրանց կին լինելու պատճառով»՝ ներառելով ինչպես սեքսիզմի, այնպես էլ ատելության հիմքով բոլոր սպանությունները[22]:

[18]Ավելի մանրամասն տե՛ս ««Լռեցված ձայներ». կնասպանությունը Հայաստանում. 2016-2017 թվականների զեկույցը» հետևյալ հղմամբ՝ https://coalitionagainstviolence.am/wp-content/uploads/2024/10/femicide2018.pdf

[19]Ջիլ Ռեդֆորդ և Դայանա Ռասել (խմբ.), «Կնասպանություն. կնոջ սպանության քաղաքականությունը», Բաբինգհեմ՝ Օփեն Յունիվերսիթի Փրես, 1992:

[20]Ջեյն Կապուտի, Դայանա Ռասել, «Կնասպանություն. խոսելով անխոսելին», Ms. 1990;1(2):

[21]Ջիլ Ռեդֆորդ և Դայանա Ռասել (խմբ.), «Կնասպանություն. կնոջ սպանության քաղաքականությունը», Բաբինգհեմ՝ Օփեն Յունիվերսիթի Փրես, 1992:

[22]Ռասել Դ. Ե. Հ., «ՁԻԱՀ-ը որպես զանգվածային կնասպանություն. Հարավային Աֆրիկան՝ կիզակետում, Կնասպանությունը գլոբալ հեռանկարում», Նյու Յորք, Teacher's College Press, 2001:

Անդրադարձ «կնասպանություն» եզրույթին միջազգային մակարդակում

2012 թվականին Վիեննայում կնասպանության երևույթի քննարկմանը նվիրված գագաթնաժողովում մշակվեց Կնասպանության մասին Վիեննայի հռչակագիրը[23]:

Հռչակագրի համաձայն՝ **«կնասպանությունը» սահմանվում է կանանց և աղջիկների՝ իրենց գենդերի պատճառով սպանություն**, որը կարող է լինել.

1. կանանց սպանություն նախկին և ներկա զուգընկերների կողմից,
2. խոշտանգումներով և կնատյացությամբ պայմանավորված սպանություն,
3. «պատվի համար» կամ «պատվի պատրվակով» կանանց և աղջիկների սպանություններ,
4. զինված հակամարտություններում կանանց և աղջիկների միտումնավոր սպանություն,
5. կանանց՝ օժիտին վերաբերող հարցերի պատճառով սպանություն,
6. կանանց և աղջիկների՝ իրենց սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության պատճառով սպանություն,
7. տեղաբնիկ և ցեղաբնակ կանանց և աղջիկների՝ իրենց գենդերի պատճառով սպանություն,
8. նորածին աղջիկների և սեռով պայմանավորված պտղի սպանություն,
9. կանանց սեռական օրգանների խեղման հետևանքով առաջացած մահ,
10. կախարդություն կամ հմայություններ անելու մեղադրանքով կանանց սպանություն,
11. կանանց և աղջիկների սպանություն՝ կազմակերպված հանցավորության, թմրամիջոցների գործարքների, մարդկանց թրաֆիքինգի և սովորական սպառազինության տարածման հետ առնչություն ունեցող խմբերի կողմից և այլ դրսևորումներ:

Վիեննայի հռչակագրից մեկ տարի անց՝ 2013 թվականի դեկտեմբերին, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց № 68/191 բանաձևը[24], որը վերաբերում է կանանց սպանություններին, այդ թվում՝ ներկա և նախկին զուգընկերների կողմից: Բանաձևում օգտագործվում է «կանանց գենդերային սպանություններ» եզրույթը, սակայն նշվում է, որ ընդունելի

[23]Կնասպանության մասին Վիեննայի հռչակագիր, հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.dianarussell.com/vienna-declaration-.html

[24]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.unodc.org/documents/commissions/CCPCJ/Crime_Resolutions/2010-2019/2013/General_Assembly/A-RES-68-191.pdf

անվանում է համարվում նաև «կնասպանությունը» (ֆեմիցիդ), որն այսօր կիրառվում է որոշ երկրների օրենսդրությունում:

Կնասպանության տեսակները

Ըստ որոշ տեսաբանների՝ **կնոջ ցանկացած սպանություն**, այդ թվում՝ ոչ կանխամտածված, **որը նպատակ ունի վերահաստատելու կնոջ վրա հայրիշխանական համակարգի կողմից կիրառվող իշխանությունը**, ինչպիսին են, օրինակ՝ կանանց ծննդաբերության, չպաշտպանված հղիության արհեստական ընդհատումների հետևանքով տեղի ունեցած մահացության դեպքերը[25], դիտարկում են որպես կնասպանություն, քանի որ հայրիշխանական համակարգը չի արժևորում կնոջ կյանքն այնպես, ինչպես կարժևորեր տղամարդու կյանքը և ըստ այդմ՝ չի ստեղծում համապատասխան պայմաններ կամ ստեղծում է լրացուցիչ խոչընդոտներ, որոնք ազդում են կնոջ առողջության և կյանքի վրա:

Հեղինակներ Ջ. Ռեդֆորդը և Դ. Ռասելը նշում են, որ կնասպանությունն ունի շատ տարբեր դրսևորումներ, ինչպես, օրինակ՝ **ռասիստական կնասպանությունը**, երբ սև կանանց սպանում են իրենց ռասայական պատկանելության պատճառով, **հոմոֆոբ կնասպանությունը**, երբ լեսբի, բիսեքսուալ կանանց սպանում են իրենց սեռական կողմնորոշման պատճառով, **ամուսնական կնասպանությունը**, որը կատարվում է ներկա կամ նախկին զուգընկերոջ կողմից, և **կնասպանություն**, որը կատարվում է **անծանոթի կողմից**[26]:

Ներկա կամ նախկին զուգընկերոջից բացի՝ կնասպանությունը կարող է կատարվել[27]՝

- → ընտանիքի այլ անդամների կողմից (հոր, որդու, սկեսրայրի և այլն),
- → մերձավոր ազգականների կամ ընկերների, հարևանների կողմից,
- → անծանոթի կողմից:

Ընտանեկան բռնության և կնասպանության միջև առկա կապը

Կանանց նկատմամբ բռնությունը խտրականության դրսևորման առավել տարածված ձևերից է, որը գնահատվում է որպես մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների խախտում: Կանանց նկատմամբ բռնությունը հիմնականում կատարվում է ընտանեկան միջավայրում և

[25]Կնասպանության ընկալման ամրապնդում: Կիրառելով հետազոտությունը խթանելու գործողությունները և հաշվետվողականությունը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://media.path.org/documents/GVR_femicide_rpt.pdf
[26]Ջիլ Ռեդֆորդ և Դայանա Ռասել, «Կնասպանություն. կանանց սպանությունների քաղաքականությունը», 2012:
[27]Դայանա Ռասել, «Կնասպանությունը գլոբալ հեռանկարում», Teachers College Press, 2001:

դրսևորվում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական, սեռական, տնտեսական ձևերով: Ամբողջ աշխարհում ընտանեկան բռնությունից հիմնական տուժողները կանայք ու աղջիկներն են:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ յուրաքանչյուր երրորդ կին աշխարհում (շուրջ 30%-ը) կյանքի ընթացքում ենթարկվել է կա՛մ սեռական, կա՛մ ֆիզիկական բռնության՝ զուգընկերոջ կողմից, կամ սեռական բռնության՝ այլ անձի կողմից: Այս բռնությունների մեծ մասը կատարվում է զուգընկերոջ կողմից: Ամբողջ աշխարհում հարաբերությունների մեջ եղած 15-49 տարեկան կանանց գրեթե մեկ երրորդը (27%-ը) հաղորդել է, որ որևէ փուլում ենթարկվել է ֆիզիկական և/կամ սեռական բռնության զուգընկերոջ կողմից: Բռնությունը ոչ միայն կարող է բացասաբար ազդել կնոջ ֆիզիկական, հոգեկան, սեռական և վերարտադրողական առողջության վրա, այլև որոշ դեպքերում կարող է մեծացնել ՄԻԱՎ-ով վարակման ռիսկը[28]:

Կնասպանության հնարավոր ռիսկերից կանանց պաշտպանության հարցում, թերևս, մեծ նշանակություն ունեն պետության պարտավորությունները: Այս տեսանկյունից կարևոր է, որ կնասպանության դեպքերը դադարեն միայն հանցագործությունը կատարած անձի պատասխանատվության շրջանակում դիտարկվելուց, այլ համարվեն հանրային և պետական պատասխանատվության առարկա:

[28]Առավել մանրամասն հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.who.int/news-room/fact-sheets/detail/violence-against-women?

• • •

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ԴԱՏԱՎՃՌՈՎ ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

!ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ նյութը պարունակում է բռնության տեսարաններ և սպանության նկարագրություններ

Մերի Մովսեսյան (անհայտ - 2021)

Մերի Մովսեսյանին սպանել է ամուսինը՝ դանակի 14 հարվածներով

Գործի դատավարական նախապատմությունը[29]

Մերի Մովսեսյանը շուրջ 9 տարի ամուսնացած է եղել Միեր Զաքարյանի հետ: Համատեղ ամուսնության ընթացքում ունեցել են երկու աղջիկ: 2021 թվականի հունիսին փաստացի ամուսնալուծվել են, և Մերին տեղափոխվել է իր հոր և քույրերի բնակարան: 2021 թվականի օգոստոսի 11-ին՝ 08:50-ի սահմաններում, այդ շենքի շքամուտքում Մ. Զաքարյանը սպանել է Մերիին:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

Գործի ամբողջ քննության ընթացքում Մ. Զաքարյանն իր ցուցմունքները կառուցել է այն տրամաբանությամբ, որ սպանությունը կատարել է «խանդի շարժառիթով»: Ըստ նրա՝ սպանության օրը տնից նախապես վերցրել է դանակ, որպեսզի «դանակի սպառնալիքով» ծանոթանա Մերիի հեռախոսում եղած նամակագրությունների բովանդակությանն ու տեսնի, թե «...ով է իր ընտանիքը քանդում»:

Շքամուտքում տեսնելով Մերիին՝ հարձակվել նրա վրա, ձախ ձեռքով բռնել է պարանոցից և նախապես իր մոտ պահվող դանակի սպառնալիքով պահանջել է Մերիի բջջային հեռախոսն ու գաղտնաբառը: Ստանալով մերժում՝ աջ ձեռքում գտնվող դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել Մերիին՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի վնասվածքներ՝ «...ձախից բազմաթիվ կողոսկրերի կոտրվածքներ, ձախ թոքի, աորտայի, թոքային զարկերակի վնասումներ՝ կրծքավանդակի ձախ կեսի համակցված, բազմաթիվ, ծակած-կտրած, պլևրալ խոռոչ թափանցող վերքեր, որոնք առաջացրել են հեմոռագիկ տրավմատիկ շոկ՝ պայմանավորված արտաքին և ներքին արյունահոսությամբ»:

Մերիի քույրը՝ որպես տուժողի իրավահաջորդ, դատարանում ցուցմունք է տվել այն մասին, որ քրոջ ամուսնական կյանքը բարդ է եղել: Սկզբում չեն իմացել վիճաբանությունների մասին, իսկ հետո սկսել են նկատել հաճախակի հայտնվող կապտուկներ: Ըստ քրոջ՝ բաժանման պատճառը եղել է՝ «...Միերի խաղալը, պարտքեր էր անում, գողություններ էր անում, իրանց ընտանեկան վիճակը, հոգնել էր արդեն, չէր կարողանում այնտեղ մնալ...»: Հարաբերությունները լարված են եղել նաև երեխաներին վերաբերող հարցերում: Ըստ քրոջ՝ «...երեխաներին շատ էին մանիպուլացնում. Միերն անընդհատ զանգում, ասում էր՝ նայի մամադ ո՞ւմ հետ ա խոսում, ո՞ւր ա, ի՞նչ ա անում»: **Սպանությունից 1-2 շաբաթ առաջ** Մ. Զաքարյանը Մերիին ասել էր. «...կսպանեմ, կմորթեմ...», և Մերին

[29]Դատական գործ № ԵԴ/0133/01/22:

դիմել էր ոստիկանություն: Երկուսին կանչել էին ոստիկանություն, բայց քույրը չի մտաբերել՝ արդյոք Մերին մեղադրանքը հետ էր վերցրել, թե ոչ:

Պատասխանելով «խանդին» վերաբերող հարցերին՝ հայտնել է, որ մի քանի տարի առաջ եղել է դեպք, որ. «...Միերը սոցկայքերից համարներ էր հանել, հետո իմացել են, որ համարներից հորաքրոջ որդու համարն է եղել. այդ համարին էր խանդում»:

Մերիի մյուս քույրը որպես վկա իր ցուցմունքում ևս անդրադարձել է կրկնվող բռնություններին՝ նշելով. «...Ամբողջ ամուսնության ընթացքում **միշտ վիճել են.** վերջին դեպքի ժամանակ ...չենք հարցրել՝ ինչն է եղել պատճառը, քանի որ **սովորական երևույթ էր դարձել անընդհատ վիճելը, գալ գնալը: ...Երբ գալիս էր տուն, կա՛մ մեր համոզելով էր վերադառնում, կա՛մ ամուսինն էր գալիս տանում...»:**

Դատաքննության ընթացքում ցուցմունք տված մյուս վկաները ևս հայտնել են լարված հարաբերությունների, ինչպես նաև Մ. Զաքարյանի՝ պարբերաբար առցանց խաղադրույքներ կատարելու մասին: Վկաները նշել են նաև Մ. Զաքարյանի կողմից Մերիի և նրա ընկերների հետ շփումները սահմանափակելու, հեռախոսը վերահսկելու, կրկնվող ֆիզիկական բռնության մասին, ինչպես նաև նկարագրել են Մերիի ինքնասպանության փորձ կատարելը, ինչը, ըստ ցուցմունքների, կանխել է Մ. Զաքարյանի քույրը, որն այդ պահին տեսել է Մերիին և երեխաներին բաց պատուհանագոգին կանգնած: Կարևոր է նաև արձանագրել, որ Մ. Զաքարյանի հարազատների մեծ մասն իրենց ցուցմունքներում թեպետ ընդունել են վերջինիս պարբերաբար առցանց խաղադրույքներ կատարելու հանգամանքը, սակայն ժխտել են կախվածություն ունենալը, իսկ անդրադառնալով հարաբերություններին՝ չեն որակել դրանք որպես «բռնություն պարունակող», սակայն նշել են պարբերաբար վեճերի, լարվածությունների մասին: Մերիի հարազատների ցուցմունքների վերլուծությունը հստակ շեշտադրում է, որ **սպանությունից 1-2 շաբաթ առաջ ստացած սպառնալիքներից հետո Մերին փորձել է վերջնականապես դադարեցնել այդ բռնի հարաբերությունների շղթան՝ դիմելով ոստիկանություն,** գտնել փաստաբան, որը մատչելի եղանակով կաջակցեր ամուսնալուծության հարցում:

<u>Դատարանի եզրահանգումը</u>

Դատարանն իր վերլուծությամբ անդրադարձել է 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատժի՝ 8-15 տարի ժամկետին և այն համադրել ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված այն դիրքորոշմանը, որ պատիժը համարվում է արդարացի, եթե դատարանը ճիշտ է գնահատում գործի բոլոր հանգամանքները, անձին բնութագրող բոլոր տվյալները և քրեական օրենքով նախատեսված պահանջների հիման

վրա հանցագործության մեջ մեղավոր անձի նկատմամբ նշանակում է այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ և բավարար է այդ անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար[30]:

Պատիժ նշանակելու հարցը քննարկելիս որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանն արձանագրել է, որ Մ. Զաքարյանը դեպքից անմիջապես հետո մեղայականով ներկայացել է ոստիկանության բաժանմունք, նախաքննության և դատաքննության ընթացքում ընդունել է իրեն առաջադրված մեղադրանքը, տվել է խոստովանական բնույթի ցուցմունքներ, զղջացել կատարածի համար, ինչպես նաև նրա խնամքին են մինչև **14 տարեկան երկու անչափահաս երեխաները**:

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք դատարանը չի արձանագրել:

Դատարանը եզրակացրել է, որ Մ. Զաքարյանը մեղավոր է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքում, և նրա նկատմամբ պետք է պատիժ նշանակել ազատազրկում 8 տարի 6 ամիս ժամկետով:

Դատավճիռը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարան, սակայն դատարանը վերահաստատել է, որ նշանակվել է արդարացի պատիժ՝ այդկերպ մերժելով վերաքննիչ բողոքն ու Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավճիռը թողել անփոփոխ:

[30]Վվելին՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Կարեն Հարությունյանի վերաբերյալ գործով 2007 թվականի նոյեմբերի 30-ի № ՎԲ-201/07 որոշումը:

Եկատերինա Բաբենկո (անհայտ - 2022)

Եկատերինա Բաբենկոյին սպանել է զուգընկերը՝ խեղդելով նրան

Գործի դատավարական նախապատմությունը[31]

Եկատերինա Բաբենկոն 2020 թվականից ապրել և աշխատել է Գյումրիում: 2021 թվականի սկզբին ծանոթացել է Ալեքսեյ Պեշկովի հետ, որը պայմանագրային զինծառայող էր Գյումրիում տեղակայված ՌԴ ՊՆ ՌԴ 04436 զորամասում (102-րդ ռազմաբազա): Մի քանի ամիս անց Ա. Պեշկովը տեղափոխվել է Եկատերինայի բնակարան՝ համատեղ բնակության: 2022 թվականի դեկտեմբերի 23-ին՝ 20:00-ի սահմաններում, ծառայությունից վերադառնալով Եկատերինայի վարձակալած բնակարան՝ Ա. Պեշկովը նրանից պարզաբանումներ է պահանջել նույն օրը՝ կեսօրին՝ մինչ իր վերադառնալը, օտար անձանց գտնվելու վերաբերյալ, որի պատճառով վիճաբանություն է առաջացել, և Ա. Պեշկովը սպանել է Եկատերինային:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

Դատաքննության ընթացքում ցուցմունք տված վկաները հայտնել են, որ վերջին ամիսներին Եկատերինայի և Ա. Պեշկովի հարաբերությունները լարված են եղել: Սպանության օրը տանը գտնված ընկերը նշել է, որ այդ օրը Եկատերինան պատմել է, որ Ա. Պեշկովը **« ...տանը հաճախակի է վեճեր ստեղծում ...** կոտրել է տանը եղած բոլոր օղու բաժակները»: Եկատերինան պատմել է, որ նրա ունեցած պարտքերն է վճարել իր աշխատած գումարներով, որը եղել է մոտավորապես 17·000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Միաժամանակ նա նշել է, որ **«...վախենում է այդ տղայից...»**, որ՝ **«...նա կարող է իրեն վնասել...»**: Նույն անձի ցուցմունքներից պարզ է դառնում, որ տանը եղած ժամանակ Ա. Պեշկովը մի քանի անգամ զանգել է, սակայն Եկատերինան 1-2 զանգի պատասխանելուց հետո չի ցանկացել խոսել Ա. Պեշկովի հետ: Հեռախոսն անջատելուց հետո Ա. Պեշկովը շարունակել է զանգահարել, իսկ Եկատերինան անջատել է այն: Նույն ընթացքում Եկատերինան ու նրա ընկերը զրուցել են, խմել, որից հետո Եկատերինան խնդրել է նրան գնալ, որպեսզի ինքը կարողանա քնի: Դատական գործի տվյալներից պարզ է դառնում, որ ընկերոջ գնալուց հետո կարճ ժամանակ անց Եկատերինայի բնակարան է եկել Ա. Պեշկովը:

Դատալսումների ընթացքում ներկայացված մեղադրանքում Ա. Պեշկովն իրեն մեղավոր չի ճանաչել, թեև հայտարարել է, որ Եկատերինայի մահը վրա է հասել իր գործողությունների հետևանքով, և զղջացել է դրա համար: Ըստ նրա՝ սպանության օրն իբրև թե Եկատերինան նրա հասցեին հնչեցրել է վիրավորական արտահայտություններ և հարվածել

[31] Դատական գործ № ԾԴ/0228/01/23:

դեմքին, նա էլ քաշքշել և հարվածներ է հասցրել Եկատերինայի մարմնի տարբեր հատվածներին: Մասնավորապես՝ «...աջ ձեռքի արմնկափոսի հատվածով բռնել է Եկատերինայի պարանոցից և, վերցնելով խոհանոցային դանակը, Եկատերինայի պարանոցի շրջանում կտրած-ծակած վերքերի ձևերով վնասվածքներ է հասցրել և, սեղմած պահելով, պարանոցի օրգանների ճնշումով հասցրել է մեխանիկական շնչահեղձության...»:

Ա. Պեշկովը փորձել է ներկայացնել նաև, որ սպանությունը կատարել է անհրաժեշտ պաշտպանության իրավիճակում, սակայն դատական գործի նյութերում անհրաժեշտ պաշտպանության կամ դրա սահմանազանցման հանգամանքների մասին վկայող արժանահավատ փաստական տվյալներ առհասարակ առկա չեն:

Դատաբժշկական փորձաքննության տվյալներով՝ Եկատերինայի մահը վրա է հասել «...մեխանիկական շնչահեղձությունից, որը պայմանավորված է բութ առարկա(ներ)ով պարանոցի օրգանների ճնշումով»: Այս հետևությունը հիմնավորվում է հետևյալ մարմնական վնասվածքների առկայությամբ՝ «...պարանոցի, ձախ ստորին ծնոտի, աջ և ձախ անրակների շրջանների քերծվածքներով, ինչպես նաև թոքերում միջալվեոլյար միջնապատերի պատռվածքներով, էմֆիզեմայի խոշոր օջախների առաջացումով և արագ մահվան բնորոշ նշաններով (կանգային երակային գերարյունություն ներքին օրգաններում, մուգ կարմիր գույնի արյան հեղուկ վիճակ)...»: Փորձաքննությամբ հայտնաբերվել են նաև քերծվածքներ «...ձախ այտային, կրծքավանդակի, ձախ արմնկահոդի, աջ նախաբազկի, աջ աճուկային, զույգ ծնկահոդերի և աջ սրունք-թաթային հոդի շրջաններում, արյունազեղումներ աջից վերին կոպի և ակնագնդի սպիտակուցաթաղանթի, ձախ ստորին ծնոտի, աջ այտային, ձախ ուսագոտու, աջ ենթաթիակային, աջ արմնկային, ձախ ազդրի և աջ ծնկան հոդի շրջաններում և գլխի մաշկի տակ, ծակած-կտրած մեկական վերքեր պարանոցի աջ և ձախ կեսերի շրջաններում: Ծակած-կտրած վերքերը հասցվել են ծակող-կտրող գործիքով(ներ) ով, ...իսկ մյուս վնասվածքները հետևանք են բութ առարկաների ներգործության...»:

<u>Դատարանի եզրահանգումը</u>

Դատարանը Ա. Պեշկովի պատժի նշանակման հարցը քննարկելիս որպես **պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ արձանագրել է հանցագործությունը բացահայտելուն, գործով ապացույց ձեռք բերելուն աջակցելը, իսկ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է դիտարկել հանցանքն ալկոհոլի ազդեցությամբ կատարելը:**

Դատարանը եզրակացրել է, որ Ա. Պեշկովը մեղավոր է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքում, և նրա նկատմամբ պետք է նշանակել պատիժ՝ ազատազրկում՝ 10 տարի ժամկետով:

Սիրանուշ Մանուկյան (անհայտ - 2022)

Սիրանուշ Մանուկյանին սպանել է նախկին ամուսինը՝ դանակահարելով նրան

Գործի դատավարական նախապատմությունը[32]

Սիրանուշ Մանուկյանը շուրջ 19 տարի ամուսնացած է եղել Անդրանիկ Երանոսյանի հետ: Համատեղ ամուսնության ընթացքում ունեցել են երկու որդի: 2022 թվականի ապրիլին փաստացի ամուսնալուծվել են, իսկ մայիսի 22-ին՝ 23:00-ի սահմաններում, Ա. Երանոսյանը սպանել է Սիրանուշին:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

Հիմնական դատալսումների ժամանակ Ա. Երանոսյանը, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, հրաժարվել է ցուցմունք տալուց՝ միաժամանակ հայտնելով, որ ընդունում է ներկայացված մեղադրանքն ու զղջում է կատարածի համար: Ինչպես Ա. Երանոսյանը մինչդատական վարույթում, այնպես էլ հիմնական վկաները դատաքննության ընթացքում իրենց ցուցմունքներում անդրադարձ են կատարել Սիրանուշ Մանուկյանի՝ այլ տղամարդու հետ ունեցած հարաբերություններին: Անհրաժեշտ է նկատել, որ դատական գործի նյութերի ուսումնասիրության ընթացքում առավել նկատելի էր վկաների բացասական վերաբերմունքն այն հանգամանքին, որ Սիրանուշ Մանուկյանն այլ տղամարդու հետ հարաբերություններ է ունեցել և չի ցանկացել վերամիավորվել ամուսնու հետ, քան կատարված դաժան սպանությանը: Նույնիսկ որդիներից մեկն իր ցուցմունքում նշել է, որ հայրն **«...ընդունակ չէր»** նման արարք կատարելու, և հավանաբար **մոր հասցրած «...անձնական վիրավորանքն է դրդել...»**:

2022 թվականի մայիսի 22-ին Սիրանուշը վերադարձել է Գյումրի և եկել է տուն: Նա ասել է, որ եկել է երեխաներին տեսակցելու և հագուստները տանելու նպատակով: Ա. Երանոսյանի՝ Երևան այլևս չվերադառնալու և վերամիավորվելու առաջարկը Սիրանուշը մերժել է և հեռացել, որից հետո Ա. Երանոսյանն ալկոհոլ օգտագործած վիճակում նորից նույն առաջարկով զանգահարել է նրան: Ստանալով կրկին մերժում և տեղեկանալով, որ Սիրանուշը գիշերելու է Գյումրիում՝ հորաքրոջ դստեր տանը, իր տնից վերցրել է իրեն պատկանող դանակը, նստել է պատահական տաքսի ու գնացել է Սիրանուշի հորաքրոջ դստեր բնակարան՝ Սիրանուշին սպանելու նպատակով:

Դուռը թակելու ժամանակ ներկայացել է իրենց տղայի անունով: Հորաքրոջ դստեր ցուցմունքի համաձայն՝ Սիրանուշն ուրախացել է՝ մտածելով,

[32] Դատական գործ № ՇԴ/0105/01/22:

որ որդին է եկել, սակայն Ա. Երանոսյանը ներխուժել է բնակարան, դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել Սիրանուշին՝ պատճառելով «...տրավմատիկ հեմոռագիկ շոկի, կրծքավանդակի շրջանի ծակած-կտրած թափանցող և չթափանցող 8 վերքերով՝ սրտապարկի, սրտի, ստոծանու, փայծաղի վնասումներով, ձախակողմյան հեմոթորաքսի, հեմոպերիկարդի և հեմոպերիտոնեիումի առաջացմամբ, դեմքի ձախ կեսի և ստորին շրթունքի շրջանների 2 կտրած վերքերով, արտաքին և ներքին արյունահոսությամբ, կյանքի հետ անհամատեղելի առողջությանը ծանր վնաս պատճառող մարմնական վնասվածքներ...», ինչի հետևանքով Սիրանուշ Մանուկյանը մահացել է: Նույն վկայի ցուցմունքներով՝ Սիրանուշին դանակով հարվածներ հասցնելիս Ա. Երանոսյանն ասել է՝ **«դե մեռի»**:

Հատկանշական է, որ չնայած այս ամենին՝ Ա. Երանոսյանը ցուցմունքներ է տվել այն մասին, որ կնոջը սիրել է, նրան վնաս պատճառելու, սպանելու դիտավորություն չի ունեցել, «...պահի ազդեցության տակ է ստացվել...»՝ իր կամքից անկախ՝ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում: Ավելացրել է, որ խանդել է, բայց վրեժ լուծելու ցանկություն չի ունեցել, այլ բազմիցս, այդ թվում՝ դեպքի օրը, ցանկացել է կնոջը «...վերադարձնել ընտանիք...»:

Այս առնչությամբ վկա հոգեբան-փորձագետը հիմնական դատալսումների ժամանակ ցուցմունք է տվել այն մասին, որ աֆեկտի համար կարևորագույն 3 փուլեր գոյություն ունեն, իսկ Ա. Երանոսյանի դեպքում 3 փուլերն էլ առկա չեն եղել, ուստի սպանությունը կատարելու պահին նա չի եղել հոգեկան խիստ հուզմունքի՝ ֆիզիոլոգիական աֆեկտի վիճակում:

Դատարանի եզրահանգումը

Դատարանը Ա. Երանոսյանին մեղավոր է ճանաչել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման համար և նրա նկատմամբ պատիժ նշանակել՝ ազատազրկում 9 տարի ժամկետով:

Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ է համարել խնամքի տակ անչափահաս որդու առկայությունը և մեղայականով ներկայանալը: Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է համարել հանցանքը ալկոհոլի ազդեցության տակ կատարելը:

Կատյա Խաչատրյան (1937-2023)

Կատյա Խաչատրյանին սպանել է որդին՝ ձեռքերով խեղդելով նրան

Գործի դատավարական նախապատմությունը[33]

2023 թվականի մայիսի 6-ին՝ 16:00-ի սահմաններում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի իր բնակարանում անկողնային վիճակում գտնվող Կատյան որդուն՝ Զավեն Խաչատրյանին, խոսակցության ժամանակ հայտնել է իր մտահոգությունն այն մասին, որ որդու կինը փորձելու է բնակարանն իր անվամբ գրանցել և բոլորին բնակարանից դուրս հանել: Խոսակցության ընթացքում նրանց միջև վիճաբանություն է սկսվել, որի ընթացքում Զ. Խաչատրյանը սպանել է Կատյա Խաչատրյանին:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

Դատալսումների ընթացքում Զ. Խաչատրյանը, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, հրաժարվել է ցուցմունք տալուց և միջնորդել է հրապարակել նախաքննության ընթացքում պաշտպանի մասնակցությամբ տված խոստովանական ցուցմունքները: Դրանց համապատասխան՝ ինքն ընդունել է մեղքը, խոստովանել է կատարած հանցանքը, սակայն հրաժարվել է բացատրելուց, թե ինչու է մոր հետ ունեցած այդ վիճաբանությունն ավարտվել սպանությամբ: Միաժամանակ իր ցուցմունքներում հակասական տեղեկություններ է տրամադրել այն մասին, թե քանի անգամ է հարվածել մորը, սկզբում նշել է՝ 4-5, իսկ հետո նշել է, թե չի հիշում՝ դեպքի ժամանակ առհասարակ հարվածել է Կատյային, թե ոչ: Դատաբժշկական փորձաքննությամբ հաստատվել է, որ Զ. Խաչատրյանը նախ ձեռքերով հարվածներ է հասցրել մոր մարմնի տարբեր մասերին՝ «…պատճառելով ստորին շրթունքի ներսային մակերեսի սալջարդ վերքի, գլխի, դեմքի շրջանների, վերին և ստորին շրթունքների ներսային մակերեսների, գլխի մաշկի տակ՝ ճակատային, աջ և ձախ քունքային, աջ և ձախ քունքամկանների, գագաթծոծրակային շրջանների արյունազեղումների և քթոսկրերի կոտրվածքների ձևով մարմնական վնասվածքներ», այնուհետև ձեռքերով սեղմել է Կատյա Խաչատրյանի պարանոցն ու առաջացնելով մեխանիկական շնչահեղձություն՝ սպանել է նրան: Իր հերթին որպես վկա դատարանում հարցաքննված փորձագետը նշել է, որ. «…ձեռքով հարվածելու արդյունքում կարող էին նշված **վնասվածքները առաջանալ միայն մեկից ավելի հարվածների հետևանքով…»**:

Դատաքննության ընթացքում ցուցմունք տված մյուս վկաները հայտնել են, որ Զ. Խաչատրյանը մի քանի ամիս է, ինչ բնակվել է մոր հետ: Առողջության խնդիրների հիմքով Կատյան ունեցել է գլխապտույտ, վերջին մի քանի ամսում չի կարողացել շարժվել, և որդին ու դուստրերն

[33]Դատական գործ № ԳԴ4/0072/01/23:

են խնամել նրան: Որոշ վկաներ տեղեկություն են տրամադրել նաև Զ. Խաչատրյանի՝ պարբերաբար ալկոհոլ օգտագործելու մասին: Ոմանք նշել են, որ ալկոհոլ օգտագործելիս Զ. Խաչատրյանը սովորաբար ունենում է հանգիստ վարքագիծ, սակայն երբ հանդիմանում են ալկոհոլ չարաշահելու համար, վարքագիծը կտրուկ փոխվում է և դառնում է խիստ ագրեսիվ: Այս առնչությամբ կարևոր է նշել, որ դեպքի վայրի զննության արձանագրությամբ, ի թիվս այլ իրերի, հայտնաբերվել է նաև օղու շիշ, իսկ դատաբժշկական փորձաքննությամբ հաստատվել է նրա օրգանիզմում ալկոհոլի առկայությունը:

Դատարանի եզրահանգումը

Դատարանն իր վերլուծությամբ անդրադարձել է 05.05.2021 թվականին ընդունված ՀՀ գործող քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով կատարված հանցագործության բնույթին և հանրության համար վտանգավորության աստիճանին, այն է՝ մարդու կյանքի դեմ ուղղված առանձնապես ծանր դիտավորյալ հանցագործություն, որը կատարվել է ընտանիքում: Միաժամանակ **դատարանն անդրադարձել է** խախտված հասարակական հարաբերության սոցիալական նշանակությանը, այդ ոլորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությանը, մասնավորապես **ընտանեկան բռնությունը հնարավորինս կանխելու և դրա համար ավելի խիստ պատիժ սահմանելու անհրաժեշտությանը,** ինչպես նաև հանցանքը կատարելուց հետո մեղադրյալի դրսևորած վարքագծին, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների առկայությանը:

Պատիժ նշանակելու հարցը քննարկելիս որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանն արձանագրել է հանցանք կատարած անձի մեղայականով ներկայանալը, հանցագործությունը բացահայտելուն, գործով ապացույց ձեռք բերելուն աջակցելը, իսկ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է դիտարկել հանցանքն ալկոհոլի ազդեցությամբ կատարելը:

Դատարանը եզրակացրել է, որ Զ. Խաչատրյանը մեղավոր է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախատեսված հանցանքում, և նրա նկատմամբ պետք է նշանակել պատիժ՝ ազատազրկում՝ 16 տարի ժամկետով:

Դատավճիռը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարան՝ կայացնելու նոր դատական ակտ և որպես պատիժ նշանակելու ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված նվազագույն ժամկետով ազատազրկում, սակայն վերաքննիչ դատարանը բողոքը մերժել է և Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության դատարանի դատավճիռը թողել է անփոփոխ:

Վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք, սակայն Վճռաբեկ դատարանը մերժել է բողոքը վարույթ ընդունելը:

Ադրիանա Լիմա (1995-2023)

Ադրիանա Լիմային սպանել է ծանոթը՝ դանակով բազմաթիվ հարվածներ հասցնելով նրան, հետո այրել բնակարանը

Գործի դատավարական նախապատմությունը[34]

Ադրիանան տրանս կին էր: 2023 թվականի օգոստոսի 20-ին՝ 16:30-ի սահմաններում, Էռնեստ Ենոքյանը սպանել է Ադրիանային՝ դանակի բազմաթիվ հարվածներ հասցնելով նրան, իսկ հետո այրել է նրա՝ Երևան քաղաքում վարձակալած բնակարանը:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

Դատաքննության ընթացքում Է. Ենոքյանը, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, հրաժարվել է ցուցմունք տալուց, և միջնորդել է հրապարակել նախաքննության ընթացքում պաշտպանի մասնակցությամբ տված խոստովանական ցուցմունքներն այն մասին, որ ներկայացված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչում, զղջում է կատարած արարքի համար: Իր պաշտպանությունը Է. Ենքոյանը կառուցել է այն տրամաբանությամբ, որ իր և Ադրիանայի շփումները սկսվել և հիմնականում պայմանավորված են եղել թմրանյութերի գործածմամբ: Նրա խոսքով՝ Ադրիանան «...առաջարկել է օգտագործել...» «Կրիստալ» տեսակի թմրանյութ, և ինքը չի մերժել: Ըստ նրա՝ Ադրիանան պարբերաբար գործածել և իրեն թմրանյութ է հյուրասիրել, իսկ հետագայում ասել է, որ թմրանյութն արդեն վճարովի է, ուստի ամեն անգամ դրա դիմաց պետք է վճարել 10.000 ՀՀ դրամ գումար: Հետագայում թմրանյութի գինը իբրև թե բարձրացրել է 20.000 ՀՀ դրամ: Ըստ Է. Ենքոյանի՝ սպանությունից մոտ 2-3 ամիս առաջ Ադրիանան իրենից գումար է խնդրել 400.000 ՀՀ դրամի չափով, որպեսզի խոշոր չափի թմրանյութ գնի, ինչին ինքը տվել է իր համաձայնությունն ու բանկից վարկ է ձևակերպել 450.000 ՀՀ դրամի չափով, որից 400.000 ՀՀ դրամ գումարը տվել է Ադրիանային: Հետագայում Ադրիանայից պարբերաբար թմրանյութ է վերցրել, որի դիմաց գումար չի վճարել: Նրա պնդմամբ՝ սպանության օրը գնացել է Ադրիանայի բնակարան և նրանից պահանջել է 400.000 ՀՀ դրամ գումարը, սակայն Ադրիանան ասել է, որ. «...գումարից մնացել ա 100.000...», քանի որ ինքը պարբերաբար իրենից թմրանյութ է վերցրել, որի դիմաց չի վճարել: Այդ ժամանակ նա հայհոյել է Ադրիանային, իսկ Ադրիանան խոհանոցից վերցրել է սև ամրակով դանակ և փորձել է իրեն տնից դուրս հանել, սակայն այդ պահին ինքը դանակը վերցրել է Ադրիանայի ձեռքից և մի քանի հարված է հասցրել նրա պարանոցի հատվածում, այնուհետև Ադրիանայի սենյակում գտնվող շորերը այրել է և, դանակը վերցնելով, ինչպես նաև դուռը բանալիով դրսից փակելով,

[34]Դատական գործ № ԵԴ1/0255/01/24:

հեռացել է տնից:

Դատաբժշկական փորձաքննությամբ Ադրիանայի մարմնի վրա հայտնաբերվել են հետևյալ մարմնական վնասվածքները՝ «...գլխի, պարանոցի, կրծքավանդակի, ձախ դաստակի, ձախ նախաբազկի շրջանների բազմաթիվ ծակած-կտրած վերքեր, պարանոցի և կրքծավանդակի շրջանների ծակած-կտրած թափանցող վնասվածքներ, գլխի շրջանի ենթամաշկային արյունազեղումներով, ծոծրակոսկրի դեֆեկտով, շնչափողի, կերակրափողի, սրտապարկի, աջ նախասրտի վնասվածքներով, ձախ 3-4-րդ կողոսկրերի կոտրվածքներով, որոնք հետևանք են ծակող-կտրող գործիքի (ինչպես նաև դանակի) ներգործության, պատճառվել են կենդանության օրոք, մահվանից առաջ որոշակի կարճ ժամանակահատվածում, և նման վնասվածքները կենդանի անձանց մոտ ունեն առողջության ծանր վնասի հատկանիշեր և գտնվում են անմիջական պատճառական կապի մեջ մահվան անմիջական պատճառի հետ...»: Ադրիանայի մահը վրա է հասել նշված վնասվածքներ ստանալուց հետո «...առաջացած արտաքին և ներքին արյունահոսության հետևանքով զարգացած հեմոռագիկ շոկից»: Հայտնաբերվել են նաև «...մարմնի ընդհանուր մակերեսի մոտ 60-70% չափով 1-ին, 2-րդ աստիճանի ջերմային այրվածքներ՝ բոցով, գլխի, դեմքի, իրանի, վերին և ստորին վերջույթների շրջաններում, որոնք պատճառվել են մահը վրա հասնելուց անմիջապես առաջ ... տվյալ դեպքում չեն գտնվում պատճառահետևանքային կապի մեջ մահվան հետ»: **Ադրիանայի արյան դատաքիմիական ուսումնասիրությամբ ալկոհոլ, թմրանյութեր և հոգեմետ նյութեր չեն հայտնաբերվել:**

Հարևանությամբ ապրող վկաներից մեկը թեպետ նշել է, որ շենքի պատերը բարակ են, և կողքի բնակարանի ձայները լսելի են, անգամ երբ Ադրիանան փոշեկուլ է միացնում, սակայն այդ օրը **«...գոռգոռոցներ չի եղել, լսել եմ կնոջ «վա՛յ-վա՛յ» արտահայտություն...»**, որը անհանգստություն չի առաջացրել: Ավելի ուշ նկատել է, որ կողքի բնակարանի պատուհանից ծուխ է դուրս գալիս, կանչել է Ադրիանային, սակայն նա չի արձագանքել, գնացել է, տան դուռը թակել, սակայն ոչ ոք չի բացել, և ինքը զանգահարել է հրշեջ ծառայություն:

Անդրադառնալով սպանության շարժառիթին՝ վկաներից ոմանք հայտնել են իրենց պատկերացումներն այն մասին, որ սպանությունը կարող էր պայմանավորված լինել Ադրիանայի տրանս կին լինելու հանգամանքով, որոշ վկաներ էլ հայտնել են, որ սպանության պատճառը կարող էր լինել գումարը:

Կարևոր է արձանագրել, որ **հանցագործությունը որակելիս հաշվի չի առնվել տուժողի՝ տրանս կին լինելու հանգամանքը: Գործի քննության ընթացքում արարքը որակելիս անդրադարձ չի**

կատարվել հանցագործության շարժառիթին, չեն քննարկվել անգամ այն հանգամանքները, որոնք կարող են ցուցիչ լինել՝ գնահատելու արարքը գործելու հիմքում ընկած ատելությունը կամ անհանդուրժողականությունը: Ավելին՝ դատարանն առանց որևէ հիմնավորման, կարծես պարզապես ենթադրելով, պնդել է, որ. «...Է. Ենոքյանը որևէ ատելություն կամ վատ վերաբերմունք չի ունեցել տրանս անձանց, մասնավորապես Ադրիանա Լիմայի նկատմամբ: Դեռ ավելին՝ Է. Ենոքյանը և Ադրիանա Լիման գտնվել են մտերիմ հարաբերությունների մեջ, ինչով էլ առավել քան հերքվում է տուժողի ներկայացուցչի պնդումներն առ այն, որ առկա է եղել ատելության շարժառիթով կատարված սպանություն»:

Դատարանի եզրահանգումը

Դատարանը Է. Ենոքյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով և նշանակել է պատիժ՝ ազատազրկում 9 տարի ժամկետով, ինչպես նաև 264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և նշանակել է պատիժ՝ ազատազրկում 3 տարի ժամկետով: Ազատազրկման ձևով նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական պատիժ է նշանակել՝ ազատազրկում 10 տարի ժամկետով:

Պատիժ նշանակելու հարցը քննարկելիս որպես **պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանն արձանագրել է նախաքննության ընթացքում գործով ապացույց ձեռք բերելուն աջակցելը, առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր ճանաչելը, նախաքննության ընթացքում ինքնախոստովանական ցուցմունք տալը, ինչպես նաև վերջինիս խնամքին անչափահաս երեխայի առկայությունը:**

Պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք դատարանը չի հայտնաբերել:

• • •

ԴԵՌԵՎՍ ՉԱՎԱՐՏՎԱԾ ԵՎ/ԿԱՄ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃՎԱԾ ԳՈՐԾԵՐՈՎ ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

! ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ նյութը պարունակում է բռնության տեսարաններ և սպանության նկարագրություններ

Աստղիկ Մկրտչյան (անհայտ - 2022)

Աստղիկ Մկրտչյանին սպանել է նախկին ամուսինը՝ դանակի բազմաթիվ հարվածներ հասցնելով նրան

Գործի դատավարական նախապատմությունը[35]

Աստղիկ Մկրտչյանը 13 տարի փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ է եղել Մեսրոպ Գևորգյանի հետ: 2022 թվականի ամռանը նրանք դադարեցրել են իրենց հարաբերություններն ու ապրել առանձին: 2022 թվականի սեպտեմբերից Մ. Գևորգյանը մի քանի անգամ սպառնացել է գտնել ու սպանել Աստղիկին, որն այդ ժամանակ գտնվել է Արարատի մարզի Մասիս քաղաքում:

2022 թվականի հոկտեմբերի 6-ին՝ 05:00-ի սահմաններում, Մ. Գևորգյանը, անտեսելով Աստղիկի կամքը, կոտրել է Աստղիկի՝ Երևան քաղաքում գտնվող բնակարանի ննջասենյակի պատուհանն ու ապօրինի ներխուժել տուն: Հյուրասենյակում իր մոտ գտնվող ծալովի դանակով նախ սպառնացել է սպանել, ապա քաշքշել ու հարվածներ է հասցրել Աստղիկին՝ պատճառելով «…քթոսկրի կոտրվածք և քթի, աջից այտային, աջ քիթ-շրթունքային ծալքի շրջաններում քերծվածքներ և արյունազեղումներ, որից հետո դանակով 19 հարվածներ է հասցրել նրա կրծքավանդակին, որովայնին և մարմնի այլ մասերին…»՝ պատճառելով կյանքին վտանգ սպառնացող վնասվածքներ՝ «…արտահայտված պարանոցի աջ կեսի վերին երրորդականի առաջնային մակերեսի, աջ բազկի ստորին երրորդականի առաջնային մակերեսի 2, աջ կրծքավանդակի ստորին դրսային քառակուսու շրջանի, որովայնի աջ կեսի վերին երրորդականի առաջակողմյան մակերեսի, կրծքավանդակի հետին և աջ կեսի հետին մակերեսի 10 ծակած-կտրած, չթափանցող, ինչպես նաև կրծքավանդակի աջ կեսի հետին մակերեսի, կրծքավանդակի ձախ կեսի հետին մակերեսի, կրծքավանդակի աջ կեսի կողմնային մակերեսի 2 ծակած-կտրած, թափանցող վերքերի ձևով՝ ուղեկցված աջ քնային զարկերակի, թոքամզի, որովայնամզի, զույգ թոքերի, լյարդի վնասումներով, հեմոթորաքսով և ներքին օրգանների սակավարյունությունով, տրավմատիկ-հեմեռեգիկ շոկով…», ու այդ կերպ առանձին դաժանությամբ սպանել է նրան:

2023 թվականի հունիսի 5-ից Մ. Գևորգյանի նկատմամբ ընտրվել է կալանքը՝ որպես խափանման միջոց, որը պարբերաբար՝ 3 ամսով երկարացվել է մինչև 2025 թվականի սեպտեմբերի 6-ը:

Կատարված հանցագործության վերաբերյալ այլ տեղեկություն հասանելի չէ, և գործով դատական քննությունը դեռևս ավարտված չէ:

[35]Դատական գործ № ԵԴ1/0336/01/23:

Սոնիկ Ղամբարյան (անհայտ - 2022)

Սոնիկ Ղամբարյանին սպանել է որդին՝ բազմաթիվ հարվածներ հասցնելով նրան

Գործի դատավարական նախապատմությունը[36]

2022 թվականի նոյեմբերի 2-4-ն ընկած ժամանակահատվածում Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի իրենց տանը Սոնիկ Ղամբարյանի որդին՝ Վասակ Ղամբարյանը, բազմաթիվ հարվածներ է հասցրել մորը՝ սպանելով նրան:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

2022 թվականի նոյեմբերի 4-ին՝ 13:20-ի սահմաններում, հարազատները գտել են Սոնիկին անգիտակից վիճակում և տեղափոխել են «Աշտարակ բժշկական կենտրոն» ՓԲԸ, որտեղ նույն օրը՝ 15:05-ի սահմաններում, գիտակցության չգալով, Սոնիկը մահացել է:

Դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Սոնիկի մահը վրա է հասել «...գլխուղեղի այտուցից, որը պայմանավորված է գանգուղեղային փակ բութ վնասվածքով, ինչը հիմնավորվում է դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված հետևյալ վնասվածքների առկայությամբ՝ դեմքի (զույգ ակնակապճային, վերին ու ստորի կոպերի, զույգ այտաթշային, վերին շրթունքի ձախ կեսի, ստորին շրթունքի ձեխ կեսի, կզակի աջ ու ձախ կեսերի) զույգ ակնագնդերի սպիտակուցաթաղանթների, ենթաշաղկապենային տարածությունների, ձախից ճակատաքունքային, ձախից ականջախեցու շրջանների արյունազեղումներ, աջ այտաքունքային, ձախ այտաթշային շրջանների քերծվածքներ, քթի, աջ հոնքի շրջանների սալջարդ վերքեր, գլխամաշկի տակ բազմաթիվ շրջանների արյունազեղումներ, ձախ քունքամկանի արյունազեղում, գլխուղեղի բազմաթիվ շրջանների արյունազեղումներ, ձախ քունքամկանի արյունազեղում, գլխուղեղի բազմակի տեղակայումներով արյունազեղումներ, որոնք պատճառվել են կենդանության օրոք, բութ առարկաների ներգործության հետևանքով, հնարավոր է՝ հարվածներ (բազմաթիվ հարվածներ) հասցնելու հետևանքով և կենդանի անձանց մոտ ունեն առողջությանը ծանր վնասի պատճառման հատկանիշեր, որոնք հանգեցրել են մահվան»:

2023 թվականին նշանակված դատական նիստի ընթացքում Վ. Ղամբարյանի կինը ներկայացրել է ՔԿԱԳ գործակալության տարածքային բաժնի տված մահվան մասին պետական վկայականի պատճենը, համաձայն որի՝ Վ. Ղամբարյանը մահացել է:

2024 թվականին նշանակված դատական նիստի ընթացքում,

[36]Դատական գործ № ԱՐԱԴ/0015/01/23:

քննարկելով մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը, քրեական վարույթով տուժողներն ու մեղադրյալի կինը հայտնել են, որ Վ. Ղամբարյանի մահվան հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկություններ չունեն:

Դատարանի եզրահանգումը

Դատարանը որոշեց քրեական վարույթով Վ. Ղամբարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 15-րդ կետերով հարուցված քրեական հետապնդումը դադարեցնել՝ նրա մահվան հիմքով:

Վարդուհի Հակոբյան (1967-2023)

Վարդուհի Հակոբյանին սպանել է նախկին ամուսինը՝ բազմաթիվ հարվածներ հասցնելով նրան

Գործի դատավարական նախապատմությունը[37]

Վարդուհի Հակոբյանը փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ է եղել Վարդան Պետրոսյանի հետ: 2023 թվականի ապրիլ-մայիսին տանը ծավալված խոսակցության ընթացքում Վ. Պետրոսյանը բազմաթիվ հարվածներ է հասցրել Վարդուհու գլխին՝ սպանելով նրան:

Այնուհետև Վարդուհու դին տեղափոխելու նպատակով մարմինը կիսով չափ՝ գլխից մինչև գոտկատեղը, տեղավորել է ճամպրուկի մեջ, սակայն չկարողանալով տեղափոխել՝ ծածկել է վերմակով, վերցրել է Վարդուհի Հակոբյանի բջջային հեռախոսը, տան բանալիները, փակել տան դուռը, կողպել բակի դարպասներն ու հեռացել է:

Սպանությունից միայն 1 տարի անց է հայտնաբերվել Վարդուհի Հակոբյանի դին. արտերկրում բնակվող քույրը երկար ժամանակ քրոջից տեղեկություն չի ունեցել, վերադարձել է Հայաստան, կոտրել քրոջ տան դուռը, ներս մտել ու հայտնաբերել նրա դիակը:

2024 թվականի հուլիսի 24-ից Վ. Պետրոսյանի նկատմամբ ընտրվել է կալանքը՝ որպես խափանման միջոց, որը պարբերաբար՝ 2-3 ամսով երկարացվել է մինչև 2025 թվականի օգոստոսի 22-ը:

Կատարված հանցագործության վերաբերյալ այլ տեղեկություն հասանելի չէ, և գործով դատական քննությունը դեռևս ավարտված չէ:

[37] Դատական գործ № ԾԴ/0073/01/25:

• • •

ԱՆՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

! ԶԳՈՒՇԱՑՈՒՄ. նյութը պարունակում է բռնության տեսարաններ և սպանության նկարագրություններ

Արմիկ Գրիգորյան (1939 - 2022)

Արմիկ Գրիգորյանին սպանել են որդիները՝ բազմաթիվ հարվածներ հասցնելով նրան

Գործի դատավարական նախապատմությունը[38]

2022 թվականի օգոստոսի 21-ից օգոստոսի 26-ն ընկած ժամանակահատվածում՝ քննությամբ չպարզված օրը՝ 16:00-ի սահմաններում, Դիլիջան քաղաքի իր տան շքամուտքի դիմաց, չպարզված շարժառիթով, Արմիկ Գրիգորյանը վիճաբանել է իր որդիներ Կարեն Սիմոնյանի ու Ռուբեն Սիմոնյանի հետ, որի ընթացքում որդիները, բազմաթիվ անկանոն հարվածներ հասցնելով, սպանել են նրան:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

Դատաքննության ընթացքում ցուցմունք տված վկաները հիմնականում հայտնել են, որ գրեթե շփումներ չեն ունեցել Արմիկի և նրա որդիների հետ. որդիներն ունեցել են հոգեկան առողջության խնդիրներ, բնակարանում բացակայել են տարրական կենցաղային պայմանները, այդ թվում՝ պահարան, զուգարան, ջրամատակարարում: Վկաներից մեկը նշել է. **«...նրանց բնակարանի մոտով անցնելիս լսում էինք ծեծի ձայներ...»**: Մեկ այլ վկա հայտնել է, որ պատշգամբից տեսել է, թե ինչպես են որդիները ծեծում Արմիկին, սակայն «...մանրամասները չի հիշում...»: Մյուս վկան իր ցուցմունքում հայտնել է, որ. **«...նրանք միշտ, ամեն օր միմյանց հետ վիճելիս են եղել: Եղբայրներով միասին ծեծել են, ջարդել իրենց մորը...»**: Այս և մյուս վկաներն իրենց շարունակական անգործունությունը փորձել են հիմնավորել այն հանգամանքով, որ Կ. և Ռ. Սիմոնյանները վտանգավոր են եղել, և ոչ ոք չի փորձել միջամտել և կանխել շարունակական բռնությունը:

Թեպետ վկաներից ոչ ոք չի նշել, թե երբ և ինչպես են իմացել այն մասին, որ Արմիկին սպանել են, այնուամենայնիվ, օգոստոսի 26-ին արտակարգ իրավիճակների նախարարություն ստացվել է ահազանգ, որը ձայնագրվել է: Ձայնագրմամբ՝ կնոջ ձայնով մի անձ՝ զանգահարողը, զրուցում է տղամարդու ձայնով օպերատորի հետ: Զանգահարողը հայտնում է, որ Արմիկը մահացել է, և որ շենքում «...անտանելի հոտ է գալիս...», ոչ ոք չի մտել ներս, որ տեսնի, թե ինչ է տեղի ունեցել: Խնդրում է մոտենալ, որ տեսնեն, թե ինչ է պատահել: Հայտնում է հասցեն, նշում է նաև, որ **«...շենքում տղամարդ չկա, բոլորն աշխատանքի են, կանայք էլ ռիսկ չեն անում մտնել տուն...»**:

Բնակարանի ննջասենյակի մահճակալի վրա հայտնաբերվում է Արմիկի դին՝ անկողնում մեջքի վրա պառկած դիրքում: Ձնությամբ

[38]Դատական գործ № ՏԴ/0028/01/23:

դիակի որովայնի և դեմքի շրջանն ուռած է եղել, նկատվել են նեխման հատկանիշեր: Նույն օրը դիահերձարանում կատարվել է դիակի զննում, և հաստատվել է, որ. «...մահը վրա է հասել դիահերձման պահից ավելի քան 4 և ավելի օր առաջ...»:

Ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ հաստատվել են Ռ. և Կ. Սիմոնյանների հոգեկան առողջության խնդիրները, որոնք ուղեկցվում են «...ակտիվ ... ախտանշաներով...», որոնք ինչպես իրավախախտումը կատարելիս, այնպես էլ փորձաքննության ընթացքում զրկել և զրկում են նրանց գիտակցել իրենց գործողությունների բնույթը, նշանակությունը, վտանգավորությունը, հաշիվ տալ իրենց կատարած արարքների համար և ղեկավարել դրանք, ուստի մեղսագրվող արարքի նկատմամբ հարկ է նրանց ճանաչել անմեղսունակ:

<u>Դատարանի եզրահանգումը</u>

Դատարանը անմեղսունակության վիճակում ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 7-րդ և 15-րդ կետերով նախատեսված արարք կատարած Կ. Սիմոնյանին և Ռ. Սիմոնյանին ազատել է քրեական պատասխանատվությունից և պատժի կրումից և նրանց նկատմամբ կիրառել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում:

Ամալիկ Աբովյան (1939-2023)

Ամալիկ Աբովյանին սպանել է բարեկամը՝ բազմաթիվ հարվածներ հասցնելով նրան

Գործի դատավարական նախապատմությունը[39]

Ամալիկ Աբովյանը հիմնականում միայնակ բնակվել է Նոյեմբերյան համայնքի իր բնակարանում: Ազգականներն ու հարևանները պարբերաբար այցելել են նրան ու աջակցել տնային գործերում: 2023 թվականի մարտի 2-ին՝ 14:00-ի սահմաններում, Անդրանիկ Աբովյանն այցելել է նրան, հյուրասենյակում գտնվող վառարանի տակից վերցրել է վառելափայտի կտորներ և դրանցով հարվածներ հասցնելով՝ սպանել է նրան:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

2023 թվականի մարտի 7-ին՝ 00:40-ի սահմաններում, «Ն. Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կնետրոն» ՓԲԸ վերակենդանացման բաժանմունքում «...գանգուղեղային տրավմա, գլխի սալջարդ և պատռված վերք» ախտորոշմամբ Ամալիկ Աբովյանը, գիտակցության չգալով, մահացել է:

Դատաքննության ընթացքում ցուցմունք տված վկաները հիմնականում հայտնել են, որ սկզբում ենթադրել են, որ Ամալիկ Աբովյանն ընկել է, և շտապ օգնություն են կանչել, սակայն հետո տեղեկացել են, որ իրականում նրան ծեծել են: Այդ մասին իմանալով՝ Ա. Աբովյանի հայրը ենթադրել է, որ դա կարող էր անել իր որդին, որն իր հոգեկան առողջության խնդրի հիմքով պարբերաբար ենթադրել է, որ. «...Ամալիկ տատը իրան անիծում ա»: Սպանությունից օրեր առաջ ևս նա գնացել էր Ամալիկ Աբովյանի բնակարան ու մեղադրել նրան, որ իրեն «...անիծել է»: Դրանից հետո Ա. Աբովյանին բուժման նպատակով տեղավորել են Սևանի հոգեկան առողջության կենտրոն, որտեղից օրեր անց նա վերադարձել է տուն: Հոր հետ խոսելիս Ա. Աբովյանը խոստովանել է, որ ինքն է փայտով ծեծել Ամալիկ Աբովյանին:

Փորձաքննության ժամանակ ևս Ա. Աբովյանը հայտնել է. «...Ամալիկին ես եմ հարվածել, նա ինձ վատ բաներ էր ասում, ասում էր՝ բոյդ թաղեմ, անիծում էր ... չար կին էր...»: Ա. Աբովյանը փորձաքննությամբ ճանաչվել է անմեղսունակ:

Դատարանի եզրահանգումը

Դատարանը Ա. Աբովյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը անմեղսունակության վիճակում կատարելը համարել է ապացուցված և նրա նկատմամբ

[39]Դատական գործ № ՏԴ/0163/01/23:

կիրառել է բժշկական հարկադրանքի միջոց՝ հարկադիր բուժում հատուկ հսկողության՝ հոգեբուժական բաժանմունքի պայմաններում։

Սիլվարդ Քոչարյան (անհայտ - 2023)

Սիլվարդ Քոչարյանին սպանել է ազգականը՝ առանձին դաժանությամբ 38 հարվածներ հասցնելով նրան

Գործի դատավարական նախապատմությունը[40]

2023 թվականի մայիսի 19-ին՝ 15:30-ի սահմաններում, գործով չպարզված հանգամանքներում Աշտարակ համայնքի իր բնակարանում Սիլվարդ Քոչարյանին առանձին դաժանությամբ սպանել է Արմոնդ Աբդալիանը՝ նրա մարմնի տարբեր հատվածներին հասցնելով 38 հարվածներ:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

Դատահոգեբուժական ամբուլատոր հանձնաժողովային փորձագետի եզրակացության համաձայն՝ շուրջ 20 տարի է, ինչ Ա. Աբդալիանն ապրում է «Շիզոֆրենիա» ախտորոշմամբ, որը, ի թիվս այլնի, դրսևորվում է «…սեփական գործողությունների հետևանքները կանխատեսելու ունակության անբավարարությամբ, քննադատական ունակությունների բացակայությամբ, որոնք զրկել են իրեն մեղսագրվող արարքը կատարելու ժամանակահատվածում իրեն հաշիվ տալու, գիտակցելու իր գործողությունների վնասակարությունը և ղեկավարելու դրանք», ուստի Ա. Աբդալիանը ճանաչվել է անմեղսունակ: Նշվածը հաստատվել է նաև ստացիոնար կրկնակի դատահոգեբուժական փորձաքննությամբ:

Դատարանի եզրահանգումը

Դատարանն անմեղսունակության վիճակում ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված արարք կատարած Ա. Աբդալիանին ազատել է քրեական պատասխանատվությունից ու պատժից և նրա նկատմամբ կիրառել է ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը:

[40]Դատական գործ № ԱՐԱԴ/0019/01/24:

ՉՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ DataLex ԴԱՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

! ԶԳՈՒՇԱՑՈՒՄ. նյութը պարունակում է բռնության տեսարաններ և սպանության նկարագրություններ

Զարինե Մելիքսեթյան (1991-2022)

Զարինեին սպանել է ծանոթը՝ առանձին դաժանությամբ հարվածներ հասցնելով նրան

Զարինեն իր երկու երեխաների հետ բնակվում էր Պեմզաշենում: Արտագնա աշխատանքի մեկնած ամուսնու մտերիմը, վերադառնալով Հայաստան, Զարինեին արտամուսնական կապ ունենալու առաջարկություն է արել և ստացել մերժում:

Օրեր անց՝ 2022 թվականի նոյեմբերի 9-ին՝ 00:00-ի սահմաններում, Արկադի Բարսեղյանը և նրա ազգական Վրույր Բարսեղյանը նախապես վերցրել են փականը բացելու համար հարմարեցված բանալի, հակավորման թել և ծալովի դանակ, ավտոմեքենայով շրջանցել են բնակավայրում տեղադրված տեսախցիկներն ու Զարինեի տան մոտ սպասել են՝ համոզվելու, որ տան լույսերը մարած են: Հարմարեցված բանալիով ներխուժել են տուն և, նկատելով Զարինեին, հարվածել են նրա գլխին, ինչից նա կորցրել է գիտակցությունն ու ընկել է հատակին: Փոխլրացնելով միմյանց գործողությունները՝ Ա. Բարսեղյանն ու Վ. Բարսեղյանը դանակով հարվածներ են հասցրել Զարինեի մարմնի տարբեր մասերին:

Ձայներից միջանցք են եկել Զարինեի անչափահաս աղջիկն ու տղան: Տեսնելով երեխաներին՝ Ա. Բարսեղյանն ու Վ. Բարսեղյանը հակավորման թելով կապել են երեխաների, իսկ հետո նաև Զարինեի ձեռքերն ու նրան «...քարշ տալով տեղափոխել են ննջասենյակ: Այնտեղ երեխաների ներկայությամբ, հաշվի առնելով Զարինեի ողջ լինելու հանգամանքը, առանձին դաժանությամբ շարունակել են դանակով հարվածներ հասցնել նրան...»: Ստացած 11 մարմնական վնասվածքների հետևանքով Զարինեն մահացել է[41]:

Կարինե Մելիքսեթյան (2010-2022)

Կարինեին սպանել է ծանոթը՝ բռնաբարելուց հետո դանակահարելով նրան

Կարինեն մոր և եղբոր հետ ապրում էր Պեմզաշենում: Արտագնա աշխատանքի մեկնած իր հոր մտերիմ Արկադի Բարսեղյանն ու նրա ազգական Վրույր Բարսեղյանը 2022 թվականի նոյեմբերի 9-ին՝ 00:00-ի սահմաններում, ներխուժել են իրենց տուն:

Դանակի 11 հարվածներ են հասցրել Կարինեի մորը: Նրա աչքի առջև սպանել են մորն ու 8-ամյա եղբորը, որից հետո բռնաբարել են Կարինեին

[41]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://investigative.am/news/pemzashenoum-shahaditakan-drdoumnerov-arandz-in-dazhanoutyamb-mor-ev-erkou-anchapahas-erexaneri-spanoutyan-varouyti-naxaqnnoutyounn-avartvel-e?fbclid=IwAR-2wOv_xfZHURBK3Kvl7jd1BYA-IKnVxNNvuTG9ZEaxKse2YdLNOLF08frk

ու դանակի 2 հարված հասցնելով նրա կրծքավանդակի և որովայնի շրջաններում՝ սպանել են 12-ամյա Կարինեին[42]:

Նելլի Ն. (1976-2022)

Նելլիին սպանել է նախկին ամուսինը՝ նռնակով պայթեցնելով նրան

2022 թվականի մարտի 11-ին Զովունիի դպրոցի մոտ Նելլիին հետապնդող նախկին ամուսինը նռնակով պայթեցրել է նրան[43]:

Տաթևիկ Աբրահամյան (1987-2022)

Տաթևիկին սպանել է ամուսինը՝ ձեռքերով խեղդամահ անելով նրան

2022 թվականի մայիսի 5-ին Երևանում գտնվող իր բնակարանում Տաթևիկին ձեռքերով խեղդել է ամուսինը իրենց 3 տարեկան աղջկա աչքի առջև[44]:

Ալվարդ Ք. (1952-2022)

Ալվարդին սպանել է ամուսինը, իսկ հետո մասնատել մարմինը

2022 թվականի հունվարի լույս 26-ի գիշերը Ալվարդ Ք.-ի ամուսինը սուր-կտրող գործիքներով սպանել էր նրան, իսկ հետո մասնատել մարմինը[45]:

Անանուն (1951-2022)

71-ամյա կնոջը սպանել է ամուսինը՝ դանակի բազմաթիվ հարվածներ հասցնելով նրան

2022 թվականի օգոստոսի 18-ին՝ 07:00-ի սահմաններում, Կոտայքի մարզում գտնվող իր տանը ամուսինը սպանել է կնոջը, իսկ հետո ինքնասպան եղել[46]:

Ելենա Սերգեևա (1999-2023)

Ելենային սպանել է նախկին զուգընկերը, իսկ հետո նետել մարմինը

2023 թվականի հունիսի 15-ին՝ 13:55-ի սահմաններում, Դիլիջան-Երևան ավտոմայրուղու 2-րդ ոլորանի անտառային հատվածում հայտնաբերվել

[42]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://investigative.am/news/pemzashenoum-shahaditakan-drdoumnerov-arandzin-dazhanoutyamb-mor-ev-erkou-anchapahas-erexaneri-spanoutyan-varouyti-naxaqnnoutyounn-avartvel-e?fbclid=IwAR2wOv_xfZHURBK3Kvl7jd1BYA-IKnVxNNvuTG9ZEaxKse2YdLNOLF08frk

[43]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.police.am/news/view/%D5%A4%D5%AB%D5%A1%D5%AF110322.html

[44]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.police.am/news/view/%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AC_050522.html

[45]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.police.am/news/view/spanut260122.html

[46]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://hetq.am/hy/article/147441

է Ելենա Սերգեևայի դին՝ «…մերկ և մասամբ հոշոտված վիճակում…»:

Պարզվել է որ Ելենային սպանել է նախկին զուգընկերը՝ չհամակերպվելով այն հանգամանքին, որ Ելենան բաժանվել է իրենից և շփվում է այլ տղամարդու հետ[47]:

Անանուն (1930-2023)

93-ամյա կնոջը սպանել է համագյուղացին. բռունցքով բազմաթիվ հարվածներ հասցնելուց հետո սեռական բռնություն է գործադրել նրա նկատմամբ

2023 թվականի դեկտեմբերի 1-ին Ստեփանավանի բժշկական կենտրոնից ահազանգ էր ստացվել այն մասին, որ շտապօգնության խումբը «…բնակարանում գտել է կնոջ՝ անկողնում մահացած վիճակում, գլխին արյան հետքերով…»:

Քննությամբ պարզվել է, որ կնոջ տուն է ներխուժել 24-ամյա համագյուղացին, որը բռունցքով բազմաթիվ հարվածներ է հասցրել նրան ու օգտվելով կնոջ անօգնական վիճակից՝ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ է կատարել նրա նկատմամբ[48]:

Գայանե Կ. (1959-2024)

Գայանեին սպանել է որդին՝ դանակով հարվածներ հասցնելով նրան

2024 թվականի օգոստոսի 15-ին՝ 9.50-ի սահմաններում, Երևան քաղաքի իր բնակարանում հայտնաբերվել է «…65-ամյա Գայանե Կ.-ի դին…»: Պարզվել է, որ 8.55-ի սահմաններում «…կնոջը սուր կտրող-ծակող գործիքով սպանել է նույն հասցեում բնակվող 25-ամյա որդին…»[49]:

Անանուն (1952-2024)

72-ամյա կնոջը սպանել է որդին՝ բազմաթիվ հարվածներ հասցնելով նրան

2024 թվականի հոկտեմբերի 27-ին՝ 23:00-ի սահմաններում, Երևան քաղաքի տներից մեկի հյուրասենյակում «…հայտնաբերվել է 72-ամյա կնոջ դին՝ դեմքի դիմային հատվածը ջնջված վիճակում, ինչպես նաև՝ ներհրված հատվածի առկայությամբ մետաղական ձող՝ արնանման հետքերով…»: Պարզվել է, որ կնոջը սպանել է նրա որդին[50]:

[47] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://iravaban.net/430150.html
[48] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.hetq.am/hy/article/165833
[49] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://factor.am/801653.htm
[50] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://iravaban.net/498821.html

Անանուն (1951-2024)

73-ամյա կնոջը սպանել է որդին. հրելով վնասվածքներ է հասցրել նրան

2024 թվականի փետրվարի 29-ին՝ 16:00-ի սահմաններում, Երևան քաղաքի տներից մեկում «…մահճակալի վրա հայտնաբերվել է կնոջ դի՝ գլխի շրջանում վնասվածքներով, իսկ ճակատային հատվածում՝ պատռված վերքով, արնանման հետքերով…»:

Պարզվել է, որ կնոջը սպանել է նրա որդին[51]:

[51]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.hetq.am/hy/article/164717

ԱՄՓՈՓՈՒՄ

Կնասպանության գործերն ուսումնասիրելիս առանցքային է ոչ միայն առանձին դեպքերի վերհանումը, այլև նման սպանությունները խրախուսող և բռնությունը հավերժացնող շարունակական համակարգը:

Կնասպանության դեպքերի նկատմամբ հստակ կառուցակարգերի բացակայությունը, կնասպանությունն այլ կերպ որակելը, բռնություն գործադրած անձի նկատմամբ մեղմ վերաբերմունքը նպաստում են այդ բռնությունների շարունակականությանն ու անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը:

Այս իմաստով կարևոր է քննարկել զեկույցում վերհանված համակարգային խնդիրները, որոնք շուրջ 10 տարի է, ինչ արձանագրվում են կնասպանության վերաբերյալ պարբերական զեկույցներում:

Շարունակական անտեսում

Տարիներ շարունակ կնասպանության դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կնասպանության գործեր քննելիս **ՀՀ դատարանները,** որպես կանոն, **շարունակում են հաշվի չառնել՝**

- **հանցագործության նախապատմությունը,**
- **հանցագործության շարժառիթը,**
- **հասարակության համար վտանգավորության աստիճանը:**

Ուսումնասիրված դատական ակտերը փաստում են, որ կնասպանության գործեր քննելիս **դատարանները չեն քննարկում գործով տուժողների նկատմամբ բռնության պարբերական լինելու հանգամանքը**, մինչդեռ ներկայացված գործերով որպես վկա ներգրավված անձինք մեծ մասամբ նշում են բռնարարի՝ բռնություն գործադրելու շարունակականության մասին: Սա արձանագրվել է ինչպես 2016-2017, 2018-2021 թվականներն ամփոփող կնասպանության զեկույցներում, այնպես էլ այս զեկույցում: Այդպիսի օրինակ է Մերի Մովսեսյանի գործը, որը պարբերաբար ենթարկվել էր բռնության, սպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ էլ դիմել էր ոստիկանություն, սակայն գործուն որևէ քայլ չէր կատարվել՝ կանխելու նրա սպանությունը:

Նշվածի առնչությամբ կարևոր է ընդգծել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով հաստատված

«Օփուզն ընդդեմ Թուրքիայի» գործը, որտեղ դատարանը ճանաչել է, որ պետությունը հաշվետու պետք է լինի այն բոլոր դեպքերում, երբ ձախողել է պաշտպանել կանանց իրավունքներն ընտանեկան բռնությունից: «Օփուզն ընդդեմ Թուրքիայի»[52], հետագայում նաև «Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի»[53] գործերով նախադեպային վճիռները հիմք ծառայեցին, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ճանաչի կանանց նկատմամբ բռնությունը որպես համակարգային խնդիր, որն արտացոլում է ուժերի անհավասար բաշխումը: Այս դեպքերով Եվրոպական դատարանն ընտանեկան բռնությունից կանանց պաշտպանության պատասխանատվությունը դրել է պետության վրա: Հետագայում «Թխելիձեն ընդդեմ Վրաստանի»[54], «Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի»[55] գործերով դատարանը վերահաստատեց իր դիրքորոշումն ու արձանագրեց, որ պետությունը չի կատարել իր պարտավորությունները՝ կանխելու հնարավոր վտանգը:

Քրեական օրենսգրքերի կարգավորումներ

2003 թվականի քրեական օրենսգիրքը գենդերազգայուն չէր և չուներ ընտանեկան բռնությանը վերաբերող համապարփակ կարգավորումներ: Արդյունքում՝ բռնարարքները հիմնականում դիտարկվում էին ինչպես ընդհանուր քրեական գործերը՝ առանց վերլուծելու բռնարարի և բռնության ենթարկվող անձի հարաբերությունների բնույթը, այդ հարաբերություններում ուժի և իշխանության դինամիկան: Օրենսդրական նշված թերի կարգավորումների արտացոլանքը նկատելի է ինչպես Մերի Մովսեսյանի, այնպես էլ Սիրանուշ Մանուկյանի գործերի քննությամբ ու նշանակած պատժի չափերով՝ համապատասխանաբար 8 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկում՝ Մերիի և 9 տարի՝ Սիրանուշի սպանության համար:

Թեպետ 2021 թվականին ընդունված քրեական օրենսգիրքը զգալի առաջընթաց էր ապահովել, այնուամենայնիվ, առանցքային հարցերում խնդիրները շարունակում էին արդիական լինել: Քրեական օրենսգրքով առանձնացված չէր ընտանեկան բռնությունը որպես առանձին հանցատեսակ, սակայն բռնության հիմնական տեսակների համար պատասխանատվություն նախատեսող հոդվածները լրացվել էին ծանրացնող հանգամանքով, որը ենթադրում էր առավել

[52]Մարդու իրավունքների եվրոպական դատարան, «Օփուզն ընդդեմ Թուրքիայի», հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://hudoc.echr.coe.int/app/conversion/pdf/?library=ECHR&id=001-92945&filename=001-92945.pdf

[53]Մարդու իրավունքների եվրոպական դատարան, «Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի», հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/resources/Kontrova%20v.%20Slovakia_en.asp

[54]Մարդու իրավունքների եվրոպական դատարան, «Թխելիձեն ընդդեմ Վրաստանի», հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://hudoc.echr.coe.int/fre?i=001-210854

[55]Մարդու իրավունքների եվրոպական դատարան, «Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի», հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://hudoc.echr.coe.int/eng?i=001-238376

ծանր պատասխանատվություն մերձավոր ազգականի կողմից կատարված հանցագործության համար: Այսկերպ **տպավորություն էր ստեղծվում, որ ընտանեկան բռնության առանձին դրսևորումներ քրեականացվել են:** Նշվածի առնչությամբ հարկ է նշել, որ «մերձավոր ազգական» հասկացության բնորոշման մեջ ներառված չէ զուգընկերը, և չկար առանձին կարգավորում այն դեպքերի համար, երբ հանցագործությունը կատարվել էր զուգընկերոջ կողմից: Կարևոր է ընդգծել, որ **ընտանեկան բռնության համատեքստում բռնարարարքը պետք է որակվի նույն կերպ՝ անկախ այն հանգամանքից, թե դա կատարվել է նախկին կամ ներկա ամուսնու/կնոջ կամ զուգընկերոջ նկատմամբ:** Փաստացի, սակայն, քրեական օրենսգիրքն ուներ կարգավորման այլ տրամաբանություն, ինչը ակնհայտ դրսևորվել է նաև Եկատերինա Բաբենկոյի գործով: Եկատերինայի սպանությունը, որը զուգընկերոջ կողմից կատարված կնասպանություն էր, չի որակվել որպես այդպիսին և ստացել է «հասարակ սպանություն» որակում, քանի որ քրեական օրենսգրքի իմաստով զուգընկերը ներառված չէ «մերձավոր ազգական» հասկացության մեջ, և չկար առանձին կարգավորում այն դեպքերի համար, երբ հանցագործությունը կատարվել էր զուգընկերոջ կողմից, ուստիև զուգընկերային հարաբերություններում բռնության դրսևորումները չեն ստացել ինչպես պատշաճ իրավական գնահատական, այնպես էլ պաշտպանություն: Սա խիստ մտահոգիչ իրավիճակ էր ստեղծում նաև նույնասեռ և/կամ ոչ հետերոնորմատիվային հարաբերություններում գտնվող անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

2024 թվականին իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքով[56] սահմանվեց, որ զուգընկերն այն անձն է, որի հետ առկա են հարաբերություններ, որոնց հատուկ է սիրային կապը՝ անկախ համատեղ բնակության կամ միմյանց հետ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքից: Միաժամանակ նաև համապատասխան փոփոխություններ կատարվեցին գործող քրեական օրենսգրքում՝ ներառելով կարգավորում այն դեպքերի համար, երբ հանցագործությունը կատարվել է զուգընկերոջ, նախկին զուգընկերոջ կողմից: Այս կարգավորումը կարելի է դիտարկել որպես ոլորտային բարեփոխում, սակայն առանցքային որոշ հարցերում խնդիրները շարունակում են արդիական լինել: **Կնասպանությունը որպես առանձին հանցատեսակ նախատեսված չէ գործող օրենսգրքում:** Ինչ վերաբերում է **ընտանեկան բռնությանը**, ապա այն ևս **առանձնացված չէ որպես**

[56]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.arlis.am/hy/acts/208514/latest

առանձին հանցատեսակ, որը ցույց կտար հանցագործության առանձնահատկություններն ու կնախատեսեր առավել ծանր պատժատեսակ ու պատասխանատվության այլ կարգ: Փոխարենը՝ օրենսդրությունը մշակվել է այն տրամաբանությամբ, որ բռնության հիմնական տեսակների համար պատասխանատվություն նախատեսող հոդվածները լրացվում են ծանրացնող հանգամանքով, որը ենթադրում է առավել ծանր պատասխանատվություն մերձավոր ազգականի, զուգընկերոջ, նախկին զուգընկերոջ կողմից կատարված հանցագործությունների համար:

Ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ

Դատական գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **կնասպանության գործերով դատարանները հաճախ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք դատաքննությամբ առհասարակ չեն հայտնաբերում**, ինչպես, օրինակ՝ Ադրիանա Լիմայի կամ Մերի Մովսեսյանի գործերում: Մինչդեռ ակնհայտ գենդերային բռնության տարրեր պարունակող կնասպանության գործերով դատարանները որպես պատասխանատվությունն ու **պատիժը մեղմացնող հանգամանք են դիտարկել, օրինակ, սպանությունից անմիջապես հետո մեղայականով ոստիկանության բաժանմունք ներկայանալը, նախաքննության և դատաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքն ընդունելը, խոստովանական բնույթի ցուցմունքներ տալը, կատարածի համար զղջալը, ինչպես նաև խնամքին մինչև 14 տարեկան անչափահաս երեխաներ ունենալը:**

Կարևոր է նկատել, որ դատարանը սահմանափակված է քրեական օրենսդրությամբ ամրագրված ծանրացնող հանգամանքներով և չի կարող նախատեսել ծանրացնող այլ հանգամանքներ, քան նախատեսված են ներպետական օրենսդրությամբ: Փոխարենը՝ դատարանը կաշկանդված չէ ցանկացած քրեական գործի շրջանակում դիտարկելու օրենսդրությամբ չնախատեսված այլ՝ մեղմացնող հանգամանքներ:

Նշված կարգավորումներն ու պրակտիկան կարելի է կիրառել այլ քրեական գործերի շրջանակներում, սակայն գենդերային բռնության դեպքերում դրանց մեխանիկորեն կիրառումն ուղղակի հակասության մեջ է Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա)[57] հետ, որը Հայաստանը ստորագրել է 2018 թվականի

[57]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680462533

հունվարի 18-ին[58]:

Կոնվենցիան 46-րդ հոդվածով պետություններին կոչ է անում ապահովել, որ Կոնվենցիայի կարգավորման առարկա հանցագործությունների մասով դատավճիռ կայացնելիս **հաշվի առնվեն որոշակի ծանրացնող հանգամանքներ.**

ա) հանցագործությունը կատարվել է նախկին կամ ներկա ամուսնու/կնոջ կամ զուգընկերոջ նկատմամբ՝ ներպետական իրավունքում դրանց տրված իմաստով, ընտանիքի անդամի, տուժողի հետ համատեղ բնակվող կամ տուժողի նկատմամբ ունեցած իշխանությունը չարաշահած անձի կողմից,

բ) հանցագործությունը կամ համասեռ հանցագործությունները կատարվել են շարունակաբար,

գ) հանցագործությունը կատարվել է որոշակի հանգամանքների բերումով խոցելի վիճակի մեջ հայտնված անձի նկատմամբ,

դ) հանցագործությունը կատարվել է երեխայի նկատմամբ կամ երեխայի ներկայությամբ,

ե) հանցագործությունը կատարվել է միասնաբար գործող երկու կամ ավելի անձանց կողմից,

զ) հանցագործությանը նախորդել կամ զուգորդել է ծայրահեղ բռնության գործադրումը

է) հանցագործությունը կատարվել է զենքի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով,

ը) հանցագործությամբ տուժողին պատճառվել է ծանր ֆիզիկական կամ հոգեբանական վնաս,

թ) կատարողը նախկինում դատապարտվել է նման բնույթի հանցագործություններ կատարելու համար:

Քննարկելով ՀՀ քրեական օրենսգրքի՝ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների կարգավորումները Կոնվենցիայի կարգավորումների համատեքստում՝ կարող ենք փաստել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 71-րդ հոդվածը, որը նախատեսում է պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ, որպես այդպիսիք չի նախատեսում.

→ երբ հանցագործությունը կամ համասեռ հանցագործությունները կատարվել են շարունակաբար,

→ կնոջ կամ ամուսնու, զուգընկերների, ընտանիքի այլ անդամների կամ համատեղ բնակվողների նկատմամբ կատարված հանցագործությունները,

[58]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/210/signatures

→ երբ հանցագործությամբ տուժողին պատճառվել է ծանր ֆիզիկական կամ հոգեբանական վնաս:

ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված մյուս բոլոր ծանրացնող հանգամանքները համապատասխանում են Կոնվենցիայի պահանջներին:

Իրավաբանական գրականության մեջ, անդրադառնալով ընտանեկան բռնության գործերով ծանրացնող հանգամանքների ամրագրման անհրաժեշտությանը, հաճախ է նշվում, որ դա կարելի է հիմնավորել նաև այն հանգամանքով, որ ընտանիքի անդամ կամ զուգընկեր չհանդիսացող այլ անձանց կողմից նույն հանցագործությունը կատարելը տուժողին ավելի քիչ տառապանք է պատճառում:

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, բռնությունից տուժածների պաշտպանության և հանցագործություն կատարած անձանց նկատմամբ քրեական հետապնդման համար արդյունավետ օրենսդրական կառուցակարգերի ապահովման նպատակով անհրաժեշտ է քրեական օրենսդրությամբ համապարփակ կարգավորումներ նախատեսել անձի՝ սեռի/գենդերի հիմքով բռնության բոլոր ձևերին՝ հատուկ ուշադրություն դարձնելով գենդերային բռնության դեպքերին:

Համակարգի արձագանքը տրանս կնոջ սպանությանը

Տրանս կանանց սպանությունները, նույնիսկ այն պարագայում, երբ ուղեկցվում են հստակ ատելության դրսևորումներով, հաճախ չեն որակվում որպես ատելության շարժառիթով կատարված հանցագործություններ: Սա պայմանավորված է թե՛ իրավական հստակ կարգավորման բացակայությամբ, թե՛ իրավապահների թերի և կանխակալ քննությամբ: Այս իմաստով՝ Ադրիանայի սպանության գործը ևս մեկ անգամ հաստատեց իրավապահ համակարգում առկա լրջագույն խնդիրները: **Հանցագործությունը որակելիս հաշվի չի առնվել տուժողի՝ տրանս կին լինելու հանգամանքը: Գործի քննության ընթացքում արարքը որակելիս անդրադարձ չի կատարվել հանցագործության շարժառիթին, չեն քննարկվել անգամ այն հանգամանքները, որոնք կարող են ցուցիչ լինել՝ գնահատելու արարքը գործելու հիմքում ընկած ատելությունը կամ անհանդուրժողականությունը:**

Խիստ մտահոգիչ է նաև այս դատական ակտում Ադրիանայի անվան կողքին կամ նրա անվան փոխարեն պարբերաբեր այլ անուն կիրառելը (**deadnaming**), ինչն ուղղակիորեն գենդերային ինքնության անտեսման նշան է, որը դիտարկվում է որպես խտրական և վնասակար պրակտիկա:

Ինչպես նախորդ զեկույցներում, այնպես էլ այս զեկույցի շրջանակում **դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անգամ ակնհայտ բռնության գործադրման փաստը նկարագրելիս** համապատասխան **արարքները չեն որակվել** որպես **կնոջ նկատմամբ բռնություն**, փոխարենը՝ դատական ակտերում համապատասխան բռնարարքները նկարագրվել են՝ օգտագործելով առավել մեղմ՝ «վիճաբանություն», «քաշքշուկ», «լարվածություն» բառերը:

Խիստ մտահոգիչ է ինչպես իրավապահ մարմինների հաղորդագրություններում, այնպես էլ դատական ակտերում ու լրատվական միջոցներով տարածված նյութերում ակնհայտ սեռական բռնության տարբեր դրսևորումներ նկարագրելիս «...սեռական հարաբերություն ունենալ...» ձևակերպումը կիրառելու հանգամանքը: **Անթույլատրելի է «...սեռական հարաբերություն ունենալ...» ձևակերպումը կիրառել այն իրավիճակում, երբ անձի նկատմամբ կիրառվել է բռնություն, գործադրվել է բռնության սպառնալիք, խախտվել է նրա մարմնի սահմանները:** Նման իրավիճակներում, երբ կիրառվում է «...սեռական հարաբերություն ունենալ...» ձևակերպումը, փոխվում է կատարված հանցագործության նկատմամբ ընկալումը, նվազեցվում է դրա ծանրության աստիճանը:

Առանձնահատուկ օրինաչափություն կա ինչպես նախորդ զեկույցներում, այնպես էլ այս զեկույցի շրջանակում, երբ **«խանդը», «բարոյականությունը»** կիրառվում են որպես օրենսդրական կարգավորումներից դուրս, բայցև կատարված ծանր **հանցագործությունները մեղմացնող արարք:** Այնպիսի ձևակերպումները, ինչպիսիք են, օրինակ՝ «...խանդի հողի շուրջ...», «...անհավատարմության մեջ կասկածելով...», պարունակում են անուղղակի մեղադրանք՝ սպանված կանանց և միաժամանակ արդարացնող նրբերանգ՝ բռնարարների հանդեպ:

Կատարված բռնությունների բնութագրման թերությունները կարող են ակնարկել նաև այդ հանցագործությունների որակման հնարավոր թերությունների մասին, որոնք անտեսում են կատարած հանցագործությունների արմատական հիմքերն ու հրաժարվում են դրանք իշխանության և ուժի, կառուցվածքային բռնության դրսևորումների ներքո քննարկելուց:

Քաղաքականության մշակման առաջարկներ

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, գենդերային բռնությունն ու կնասպանությունը կանխարգելելու և անպատժելիության մթնոլորտը վերացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը պետք է ընդունի անհրաժեշտ, արդյունավետ իրավական կառուցակարգեր և ապահովի դրանց պատշաճ իրականացումը:

Հայաստանի Հանրապետությունը պետք է վավերացնի Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան և համապատասխանեցնի գործող օրենսդրությունը Կոնվենցիայի պահանջներին:

Մինչ Կոնվենցիայի վավերացումը անհրաժեշտ է փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում: Մասնավորապես՝

1. **ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսել կնասպանությունը՝ որպես առանձին հանցակազմ:**
2. **ՀՀ քրեական օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների շարքում անհրաժեշտ է լրացնել.**

1.1. ընտանեկան բռնության գործադրումը՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք,

1.2. անձի սեռի հիմքով բռնության բոլոր ձևերի գործադրումը՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք,

1.3. ամուսնու, զուգընկերոջ, ընտանիքի այլ անդամի կամ համատեղ բնակվող անձի նկատմամբ կատարված հանցագործությունները՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք,

1.4. հանցագործությունը կամ համասեռ հանցագործությունների շարունակաբար կատարումը՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք,

1.5. հանցագործությամբ տուժողին ծանր ֆիզիկական կամ հոգեբանական վնասի պատճառումը՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք,

3. **ՀՀ քրեական օրենսգրքում կատարել լրացում՝ սահմանափակելով համաներման կիրառման հնարավորությունը գենդերային բռնության դեպքերով:**

Օրենսդրության փոփոխություններից զատ անհրաժեշտ է.

- Պարբերաբար և պարտադիր կազմակերպել համապատասխան մասնագետների (դատավորներ, դատախազներ, քննիչներ և այլն) համար դասընթացներ՝ կնասպանության, տրանս անձանց վերաբերող տեղեկությունները պատշաճ եզրույթներով և հարգալից մոտեցմամբ ներկայացնելու, ինչպես նաև գենդերային բռնության կապակցությամբ առկա միջազգային չափանիշերի վերաբերյալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ առկա կարծրատիպերի վերացմանն ու բացառելով կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ կարծրատիպեր ունեցող ցանկացած մասնագետի առկայությունն իրավապահ համակարգում:
- Պարբերաբար մշակել և իրականացնել ծրագրեր՝ ուղղված գենդերային բռնության կանխարգելմանն ու հասարակության իրազեկվածության բարձրացմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԱՀՎԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ	
Կտրող-ծակող գործիքների (այդ թվում՝ դանակ) օգտագործմամբ	11
Ծեծ (այդ թվում՝ բութ առարկաների գործադրմամբ)	5
Խեղդամահ անել	4
Պայթյուն (նռնակ)	1
Հրում/մեխանիկական վնասում	1

ԲՌՆԱՐԱՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ	
Ամուսին/նախկին ամուսին	6
Որդի	6
Զուգընկեր/փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձ	4
Ծանոթ	4
Ազգական	2

ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ	
Երևան	8
Շիրակ	5
Տավուշ	3
Լոռի	2
Արագածոտն	2
Գեղարքունիք	1
Կոտայք	1

ՈՐՏԵ՞Ղ ԵՆ ՍՊԱՆԵԼ ԿԱՆԱՆՑ	
Տանը	18
Դրսում	2
Հարազատի տանը	1
Տան շքամուտքում	1

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ	
Անհայտ	13
Հարկադիր բուժում	3
Ազատազրկում մինչև 10 տարի ժամկետով	2
Ազատազրկում 10 տարի ժամկետով	2
Ազատազրկում 10 տարուց ավելի ժամկետով	1
Կարճված քրեական գործեր՝ ամբաստանյալի մահվան հիմքով	1

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Գենդեր**

Սոցիալական, մշակութային կառուցվածք է, որը սահմանում է, թե ինչ սպասելիքներ, դերեր ու վարք են վերագրվում անհատին՝ ըստ նրա ընկալվող սեռի: Այն սովորեցվում է հասարակության կողմից և փոխվում է ժամանակի, մշակույթի և իշխանության համակարգերի ազդեցությամբ:

- **Գենդերային խտրականություն**

Գենդերային նախապաշարմունքների, կարծրատիպերի, սեռի/գենդերի հատկանիշով անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց, տղամարդկանց, ոչ բինար անձանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը:

- **Գենդերային ուղղակի խտրականություն**

Գենդերային պատկանելությունն ուղղակիորեն մատնանշող խտրականություն:

- **Գենդերային անուղղակի խտրականություն**

Խտրականություն՝ առանց գենդերային պատկանելության ուղղակի մատնանշման:

- **Գենդերային հավասարություն**

Ենթադրում է հավասար վերաբերմունքի և գենդերով/սեռով պայմանավորված խտրականությունից զերծ պայմանների և հնարավորությունների առկայություն հասարակությունում:

- **Գենդերային բռնություն**

Բռնություն, որն առաջանում է գենդերային դերերից բխող ակնկալիքների և համապատասխան հարաբերություններում ուժի անհավասար բաշխման հետևանքով:

- **Ընտանեկան բռնություն**

Ֆիզիկական, հոգեբանական, սեռական և տնտեսական բռնության բոլոր դրսևորումներն ինչպես ընտանիքի ներսում, այնպես էլ նախկին կամ ներկա ամուսինների և/կամ զուգընկերների միջև՝ անկախ

նրանից, թե կատարողը բնակվում կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում, թե ոչ:

- **Խտրականություն**

Էապես նման իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունքի դրսևորում, որը պայմանավորված է խտրականության արգելքի (պաշտպանված) հիմքերից որևէ մեկով (սեռ, գենդեր, տարիք, հավատ, առողջական վիճակ, հաշմանդամություն, գույքային դրություն, և այլն)՝ առանց որևէ օբյեկտիվ պատճառի և ողջամիտ բացատրության, այսինքն՝ երբ միջոցները չեն հետապնդում իրավաչափ նպատակ, և չկա ողջամիտ համաչափություն միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև:

- **Խտրականություն անուղղակի**

Առերևույթ չեզոք օրենք, քաղաքականություն, պայման, գործողություն, չափանիշ կամ պրակտիկա, որոնց կիրառման դեպքում որոշ խմբերի իրավունքները սահմանափակվում են խտրականության արգելքի հիմքերից որևէ մեկով, և այլոց համեմատ նրանք հայտնվում են էապես անբարենպաստ վիճակում:

- **Խտրականություն ուղղակի**

Որոշումներ, գործողություններ կամ անգործություն՝ ուղղված որոշակի հատկանիշերով անձի և (կամ) մի խումբ անձանց իրավունքների ու շահերի սահմանափակմանը, ցանկացած տարբերակմանը, բացառմանը կամ նախապատվությանը, որը նպատակաուղղված է կամ հանգեցնում է կյանքի տարբեր ոլորտներում անձանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը:

- **Կնասպանություն (ֆեմիցիդ)**

Կանանց և աղջիկների սպանություն՝ նրանց գենդերային պատկանելության հիմքով, որը պայմանավորված է գենդերային անհավասարության և նրանց կյանքի և մարմնի վրա հայրիշխանական համակարգի կողմից ուժի և իշխանության հաստատման հանգամանքներով:

- **Հայրիշխանություն**

Հասարակական կազմավորման ձև, որտեղ տղամարդն է քաղաքական իշխանության հիմնական կրողն ու բարոյական հեղինակությունը: Հայրիշխանությանը բնորոշ է տղամարդկային իշխանության ինստիտուտի և տղամարդկային արտոնությունների առկայությունը,

միաժամանակ՝ կանանց ենթակայությունն ու ենթակա կարգավիճակը:

- **Սեքսիզմ**

Եզրույթ, որը նկարագրում է տղամարդկանց ենթադրյալ գերիշխանությունը կանանց նկատմամբ: Սեքսիզմը դրսևորվում է հայրիշխանական հասարակությունում՝ ցանկացած մակարդակում:

- **Ֆեմինիզմ**

Քաղաքական, սոցիալական շարժում, գաղափարախոսություն, որի առանցքային նպատակներից են հավասարության ապահովումն ու կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացումը հասարակության մեջ: Ֆեմինիզմը սեքսիզմին, սեքսիստական չարաշահմանն ու կեղեքմանը վերջ տալուն ուղղված շարժում է, որը ներառում է նաև համակարգային սեքսիզմի ընկալումը:

...

Գրականության ցանկ

Գրքեր

1. Outshoorn, J. (Ed.). (2015). The politics of killing women. Palgrave Macmillan.
2. Fregoso, R.-L., & Bejarano, C. (Eds.). (2010). Terrorizing women: Feminicide in the Americas. Duke University Press.
3. Russell, D. E. H., & Harmes, R. A. (Eds.). (2001). Femicide in global perspective. Teachers College Press.
4. Radford, J., & Russell, D. E. H. (Eds.). (1992). Femicide: The politics of woman killing. Twayne Publishers.

Հոդվածներ, զեկույցներ, հետազոտություններ

1. World Health Organization (WHO). (2024). Violence against women: Key facts.
2. United Nations Office on Drugs and Crime (UNODC). (2023). Global homicide book.
3. United Nations Office on Drugs and Crime (UNODC). (2022). Global study on homicide: Gender-related killing of women and girls.
4. Ստելլա Չանդիրյան, «Անտեսված բռնություն. կնասպանությունը Հայաստանում 2018-2021 թվականներին» զեկույց, 2022:
5. Աննա Հովհաննիսյան և Ստելլա Չանդիրյան, ««Լռեցված ձայներ». կնասպանությունը Հայաստանում 2016-2017 թվականներին» զեկույց, 2018:
6. Russell, D. E. H. (2001). AIDS as mass femicide: Focus on South Africa. In D. E. H. Russell & R. A. Harmes (Eds.), Femicide in global perspective. Teachers College Press.
7. Caputi, J., & Russell, D. E. H. (1990). Femicide: Speaking the unspeakable. Ms., 1(2).

Իրավական փաստաթղթեր

1. United Nations Committee on the Elimination of Discrimination against Women (CEDAW). (2016). Concluding observations on the combined fifth and sixth periodic reports of Armenia (CEDAW/C/ARM/CO/5-6).
2. UN General Assembly. (2014). Resolution on taking action against gender-related killing of women and girls (A/RES/68/191).

3. Council of Europe. (2011). Convention on preventing and combating violence against women and domestic violence (Istanbul Convention).
4. Vienna Declaration on Femicide.
5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն
6. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք
7. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք
8. «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենք

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական որոշումներ

1. N.D. v. Switzerland (2025)
2. Khachatryan v. Armenia (2024)
3. Volodina v. Russia (2019)
4. Levchuk v. Ukraine (2021)
5. Tkhelidze v. Georgia (2021)
6. Opuz v. Turkey (2009)
7. Kontrová v. Slovakia (2007)

ISBN 978-9939-9367-1-0

9 789939 936710

© Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա

Երևան, 2025